Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ltn
16

1999

# ՆԱԽԱՇԱՒԻՂ ԿՐԹՈՒԹԵԱՆ

'ի պէտս Նորավարժից

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱԼ

Ի ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԷ։



ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

1862

ՏՓԽԻՍ

Ի ՀԱՅ ՏՊԱՐԱՆԻ

Գ. ՄԵԼՔՈՒՄԵԱՆՑ ԵՒ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ

Гос. Библиотека им. А. Мясникяна

Մինչ տղայն էի, իբրև զտղայ խօսէի, իբ
զտղայ խորհէի, իբրև զտղայ համարէի, այլ յ
ժամ եղէ այր, զտղայութեանն ՚ի բաց խափ
նեցի։ ա. Կորն. ժգ. 11։

**ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ;**

Съ тѣмъ, чтобы, по отпечатаніи, представлено б
въ Ценсурный Комитетъ узаконенное число экземпляро
Тифлисъ. Октября 26-го дня, 1861 года.

*Ценсоръ И. Кайтмаю*

12

2Ֆ.96 416-60

# ԱԶԴ

Այս գրքոյկը հայ մանկանց ընծայելու մեզ շարժառիթ եւ երկու պատճառ. մինը՝ որ Խաչատուր Աբովեանի պէս եռանդուն հայ դաստիարակի եւ ժամանակակից հեղինակի աշխատութիւնը ցանկացանք մաշող եւ ջնջող ժամանակի ձեռից խափել. Երկրորդը՝ որ մեր ազգային դպրոցներում օգտակար համարեցանք առաջակայ տետրակիս գործածութիւնը։ Սորա մէջ, ինչպէս և հեղինակի միւս գրուածոց մէջ պարզ երեւում է նորա եռանդը՝ որ է մայրենի լեզուի ուսումը հեշտ, դիւրաճաշակ եւ օգտակար ընծայել հայ մանուկներին։ Մենք յուսով ենք, որ մեր օրերում շատերը հայ վարժապետներից Աբովեանի հետ խոստովանում են նորին դասատուութեան հին եղանակի անպտուղ եւ հոգեմաշ լինելը, ուստի եւ վստահ եմք, թէ մեր հրատարակած տետրակը անարգել կարող է մուտ գործել ազգային դպրոցներու մէջ։ Սոյն ձեւոյն ունիմք այս «Նախաշաւիղի» եւ երկրորդ հատորը, որ է գրոց լեզուի ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ աշխարհաբառ լեզուով բացատրուած նոյնպէս նոր եւ հեշտընկալ եղանակաւ, որ եւ խոստանում ենք մօտ ժամանակումս ի լոյս ընծայել մեր սիրելի ազգի մանկանց օգտի համար։

Հ. Է.

[illegible]

[illegible]

[illegible]

1· ՁԱՅՆԱՒՈՐ ՏԱՌՔ։

ա ե է ը ի ո օ ու իւ եա եօ։

2· ԲԱՂԱՁԱՅՆ ՏԱՌՔ։

բ գ դ զ թ ժ լ խ ծ կ հ ձ ղ ճ մ յ ն շ չ
ջ ռ ս վ տ ր ց ւ փ ք և ֆ։

3· ՆՄԱՆԱՁԱՅՆ ՏԱՌՔ։

բ պ փ · գ կ ք · դ թ տ · զ ս · ժ շ · խ ղ · ծ ձ ց ·
ն յ · ճ չ ջ · ռ ր · վ ւ ու · ե է։

4· ԿԻՍԱՁԱՅՆ ՏԱՌՔ։

այ · ոյ · ույ · եայ ։

5· ՆՄԱՆԱԿԵՐՊ ՏԱՌՔ։

ս ա պ ւ ռ զ ց դ · ո ղ ու · բ ե է · ի խ թ փ վ ·
ն ծ ձ · ճ մ հ · լ շ ը չ ջ զ ղ · գ ք · ժ · ֆ ։

6· ԳԼԽԱԳԻՐՔ։

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ
Ն Շ Ո Չ Պ Ջ Ռ Ս Վ Տ Ր Ց Ւ
Փ Ք Օ Ֆ։

ՆԱՒՈՐ ՏԱՌՔ ԸՆԴ ԲԱՂԱՁԱՅՆԻՑ։

· ըբ · իբ · ոբ · օբ · ուբ · իւբ · եաբ։

բա . բե . բէ . բը . բի . բո . բօ . բու . բիւ
բեա :

բաբ . բեբ . բէբ . բըբ . բիբ . բոբ . բօբ .
բուբ . բիւբ . բեաբ :

8 . ԱՅՍՈՒ ՕՐԻՆԱԿԱՒ ՊԱՐՏ Է ՏԱԼ ՀԵԳԵԼ ԶՄԻՒՍՄՆ

ա . ե . է . ը . ի . ո . օ . ու . իւ . եւ . եօ :

գ . դ . զ . թ . ժ . լ . խ . ծ . կ . հ . . ղ . ճ .
մ . յ . ն . շ . չ . պ . ջ . ռ . ս . վ . տ . ր . ց .
ւ . փ . ք . ֆ:

9 . ՎԱՆԿՔ ԴԺՈՒԱՐԻՆՔ ԵՒ ԿՐՃԱՏԵԱԼ ԲԱՌՔ:

այբ . այս . այդ . այն . այլ . այգ . ա. . այց .
այժ . այպ . այտ . այր . այք

ոյր . ոյս . ոյգ . ոյդ . ոյզ . ոյթ . ոյժ . ոյլ . ոյծ .
ոյձ . ոյն . ոյտ . ոյց:

եայգ . եայդ . եայց . եայլ . եայ. . այ. :
եալ . եան . եար . եադ . ա.

10 . ԲԱՌՔ ՄԻԱՎԱՆԿՔ

Հաց . ջուր . քար . տան . մի

մարդ . անդ . աստ . հայր . մայր . քոյր . պատ .
տատ . ձեռն. գլուխ . հերք . մազ . յօնք . աչք .
ունկն . ակն . ռունգն . շուրթն . այտք . ծնօտ .
քիթ . կզակ . փող . աջ . մատն . ոտն . մէջ .
թիկն . կուրծ . գիրկ . գիրք . մորթ .

## 11. ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆՔ ՀԱՄԱՌՕՏՔ:

Հացն—է—սպի տակ , —մա քուր , —կա կուղ , սընու ցիչ:

Ջուրն —է —լոյծ , —հեղա նուտ , —թա փան-ցիկ :

Քարն—կա րէ—լի նիլ—ծա նր, կարծր,—ալինդ, փու խըր , կանաչ ,—կարմիր,—դեղին,—սեաւ, կապ տա գոյն ,—թան կա գին,—բո լո րակ,—եր-կայն,—ե ռան կիւ նի ,—քա ռան կիւ նի,—վեց ան-կիւ նի,—բազ ման կիւ նի:

Տունն—լի նի—փոքր ,—բարձր , —ցած , —նեղ , լայն,—պայ ծառ ,—մթին ,—յըս տակ,—աղ տե ղի, քա րեայ , —փայտեայ, —մի ա յարկ,—եր կա յարկ, ե ռա յարկ,—քա ռա յարկ,—քա ռան կիւ նի,—հին, նոր,—փայ տա չէն :

Միսն—լինի—կակուղ—կար մրա գոյն,—ա րիւ-նա թա թախ: Գետն—հո սէ,—ըն թա նայ,—շար-ժի,—դի զա նայ,—նուա զի.—դղր դայ: Հողն—
մեզ—զծա ղիկս.—զբոյսս. —ծ ... —ն—բախ
—էր—տա լիս , —էս

Հայրն—իմ—սիրէ—և—պահ պանէ—զիս։ Մայրն իմ—սնու ցանէ,—բու ծանէ,—կըր թէ,—խրա տէ, գըրկէ ,—գըգ ուէ,—և—դար մա նէ ,—զիս ։ Ինձ—պարտ—է —սի րել—զծնողս ,—զքոյրս —և —զեղ—բայրս—իմ ։

## 12· ՎԱՐԺԱՏՈՒՆ։

Ուր—ես—այժմ—կամ,—վար ժա տուն—ա սի ։ Ես—ե կեալ—եմ—աստ,—որ—ու սա նիմ—և—յե—տոյ —խե լացի —և—պի տա նի —մարդ —լի նիմ։—Մ՛ին չև —ցարդ—խա ղա յի—մի մի այն—՚ի—տան մե րում։—Ծնողքն—իմ—բե րին—զիս—աստ,—որ այ սու հե տև—էլ—իմ—ժա մա նա կը—չկոր ցնեմ և—ու սումն—առ նում ։

Աստ—՚ի—դա սա տան —տե սա նեմ—այ ժըմ զսե ղանս,—զա թոռս,—զտախ տակս—զգրա տախ—տակս,—զկա ւիճ,—զըս պունգ ,—զագ լխակս ,—ըզ մա տիտ,—զգրիչս,—զքա նոգրիչս,—զթանաքա—մանս,—և—զայլ—բա զում—ե րե խայս,—որք—պար տին—լի նիլ—ըն կերք ,—բա րե կամք—և—դա սա—կիցք—իմ ։

Աստ—է—և—վար ժա պետն—իմ։ Նա—պար—տի—ու սու ցա նել—զիս ,—և —ես—պար տիմ—հը—[illegible]ղանդ—լի նիլ—նմա , —սի րել —զնա—և—կա—[illegible]ա։ Աշա կերտն՝ —որ—գի—

տէ—զդաս—իւր—և—բա րե բա րոյ—է,—ստա նայ
զգո վու թիւն: Նա—որ—ոչ—գի տէ—զդաս—իւր,
խա ղայ,—ծու լա նայ,—ան կարգ—շար ժի,—ա-
ղա ղա կէ,—ոչ—ստա նայ—զգո վու թիւն,—այլ—զ
պա տիժ:

Ու րեմն—ես—ևս—պար տիմ—ու սա նիլ—զդաս
իմ,—լի նիլ—ա րի,—հան դարտ,—ոչ—ա ղա ղա-
կել,—որ—ստա նամ—զգո վու թիւն—և—ոչ—պա-
տիժ: Այս պէս—ա մէ նայն—մարդ—սի րէ,—գո-
վէ—և—ընդ ու նի—զիս:

## 13· ԲԱՐԻ ԵՐԵԽԱՅՆ:

Յով սէ փը—բա րի—ե րե խայ—էր: Տա նը
միշտ—հան—դարտ—էր—կե նում,—իր—ծնո—ղաց
սիր տը—եր բէք—չէր—կոտ րում: Ա ռա ւօ տը
վեր—կա ցա ծին—պէս,—իս կոյն—ե րե սը—լուա-
նում,—գլուխը—սանդ րում,—շո րե րը—հագ նում,
աղ օթքն—ա սում—էր—և—գնում—իր—ծնո ղաց
ձեռը—համ բու րում: Յե տոյ—սկսում—էր—դա-
սը—լաւ—սեր տել: Քու չումն—ան կարգ—երե-
խայից—հետ—եր բէք—չէր—խա ղում: Վար ժա-
տա նը—միշտ—պար կեշտ—էր—և—իր—վար ժա-
պե տի—ա սա ծը—միշտ—մտքումն—էր—պա հում:
Մէկ—մար դի—հետ—խօ սա լիս,—միշտ—ու շա
դի մօք—նրան—պա տաս խան—էր—տա լիս,—էս

պատ ճա ռաւ—նրան—ա մէն—մարդ—սի րում—էր։

## 14 ՉԱՐ ԵՐԵԽԱՅՆ։

Մի.քա յէ՛լը—շատ—չար—ե րե խայ—էր։ Տա նը կէս—սհաթ—չէր—մնում։ Ծնո ղաց—խօս.քին—եր-բէք—ա կանջ—չէր—դնում։ Ա մէ նի—հետ—կռւ-վում—էր։ Ա ռա ւօ տը—մինչև—տա սը—ժա մը քնում—էր։ Գլու խը,—ե րե սը,—ձեռնե րը—յըս-տակ—չէր—պա հում։ Փու չու մը—ո րին—քար էր—քցում,—ո րին—վատ—խօսք—ա սում։ Մէկ մարդ—բան—հարցնե լիս,—կամ—գլուխն—էր քո րում կամ—ե րե սը—դէս ու դէն—շուռ տալիս։ Վար ժա տա նը—միշտ—գո ռում—էր և—անկարգ—շար—ժում։ Իր—ըն կե րոց—հետ միշտ—կռիւ—էր—ա նում։ Այս—պատ ճառաւ Մի.քա յէ լին—ոչ—ոք—չէր—սի րում։

Լաւ—ե րե խայն—միշտ—պար տի—ջա նալ—որ բա րի—վա րու.ք,—մա.քուր—սրտի—հա ճոյ յա նայ Աս տու ծոյ—և—մարդ կանց։ Մի րե լի—մա նուկ՝ հե տե ւեա՛ց,—որ ա մե նայն—մարդ—.քեզ—սի րի. բար ձըր—խօ սիլ,—խո ժոռ—դի մօք—նա յել—յե-րեսս—այ լոց,—կոշտ—կեր պի—պա տաս խան տալ—ու մեք,—մեծ—ա մօթ—է։ Յա մե նայն ժամ—պա՛ր տէ—ու նիլ—զգե րեսս,—զձեռս,—և զա մե նայն—հան դերձս—մա.քուր.—աղ տոտ—ե-րե խայն—զզուե լի—է—միշտ—վասն—ա մե նայն

մար դոյ.—ու չիմ—լեր, —եթէ—կա միս—ստա նալ
զ գո վու թիւն։

## 15· ԹԻՒՔ։

Մի.—եր կու.—ե րեք.—չորս.—հինգ.—վեց.—եօ-
թըն.—ութ .—ինն.—տասն.—տասն և մի.—տասն և
երկու .—քսան.—քսան և երեք .—երե սուն.—քա-
ռա սուն.— յի սուն.—վաթ սուն.—եօ թա նա սուն.
ութ սուն.—ինն սուն. —հա րիւր.—եր կե րիւր.—ե-
րեք հա րիւր.—հա զար .—բիւր.—մի լի ոն. —տասն
ան գամ—տասն—է—հա րիւր։

## 16· ԺԱՄԱՆԱԿ։

Շա բաթն—ու նի —զեօթն—ա ւուրս. —ա ռա-
ջինն—է—կիւ րա կէ.—երկրորդն—եր կու շա բաթ.
եր րորդն՝—ե րեք—շա բաթ.—չոր րորդն՝ —չո րեք
շա բաթ.—հին գեր րորդն՝—հինգ—շա բաթ.—վե-
ցեր րորդն՝—ուր բաթ.—եօթ նե րորդն՝—շա բաթ։
Շա բաթն—սկսա նի—'ի—կիւ րա կէի—ա ւուր—և
վեր ջա նայ —'ի —շա բա թու —ա ւուր ։ Տա րին
ունի —զեր կո տա սան—ա միս. —որք—են—յուն-
վար.—փետր վար.—մարտ.—ապրիլ.—մա յիս.—յու-
նիս.—յու լիս.—օգոս տոս.—սեպ տեմ բեր.—հոկ-
տեմ բեր.—նո յեմ բեր.—դեկ տեմ բեր։
Տա րին—սկսա նի—'ի—յուն վա րի—ամ սոյն.—և

ա ւար տի—՚ի—դեկ տեմ բե րին։ Տա րին—ու նի գչորս—ժա մա նակս.—որք—են—գա րուն.—ամա-ռըն.—աշուն.—ձմեռն։ Ի գարնան—ծառք—ծաղ-կին.—լե րինք—և—դաշտք—կա նա չին. —յա մա-ռան—պտուղք—հա սա նին.—յաշ նան—քա ղին—և ամ բա րին·—և—՚ի—ձմե ռան—վա յե լեն։ Ձմեռն է—սառն, —բըքա բեր, —ցուրտ. —գայ —ձիւն յերկ նից,—եր կիրն—սա ռի։ Դաշտք—և—ձորք, լե րինք—և—անդք—ձիւ նա պա տին։ Մեք—մըր-սիմք,—վա ռեմք, —ջե ռու ցա նեմք—զ սե նեակս։

## 17· ՄԱՐՄԻՆ։

Մար մին—խմ—ունի—զ գա նա զան—մա սունս. որք—են—գլուխ,—ձեռք—և—ոտք։ Ի—վե րայ գլխոյ գտանին—քնե րակն,—հերք ,—ճա կատն. ՚ի ներքոյ ճակատու՝ յօնք ՚ի ներքոյ նո րին—աչք—ար տե ւա նունք ։ Ի—մէջ—ա չաց՝—քիթն,—որ—ունի—զեր-կուս ռըն գունս.—յաջ մէ—և—յա հեկէ—քթ լին—են այտք · —՚ի—ներքոյ —քթ լին—են—շրթունք·—՚ի—մէջ նո ցա—բե րանն . — ՚ի—մէջ —բե րա նոյն—լե զուն, ա տա մունք , —լըն դերք,—կո կորդն։ Ի—ներ քոյ շըրթ անց—գտա նին—ծնօտն,—փողն.—՚ի —ներ քոյ սո րա՝—իրանն, —լանջն,—կուրծք,—գիրկն,—յետ-կոյս—գլխոյն—գան—պա րա նոցն.—ծոր ծո րակն։ Ընդ—պա րա նո ցին—կա պակ ցին—ուսք , —թի-

կունք,—կուռն,—թեւն.—ընդ—որոյ—միանան—բա-
զուկն,—ձեռն,—մա տունք ,—եղնգունք։ Մատունք,
ո տից—են—բարձն ,—ազդր , —ծունկն,—գար շա-
պար,—ներ բան ։ Ի—մար մնի—մար դոյ—գտա-
նին —ե րեք —տե սակ—մա սունք՝ պինդք՝ — որք
են—ոս կերք , —կա կուղ՝ —որ—է —միս.—և—լոյծ՝
որ—է—ա րիւնն,—ար տա սուքն,—թուք,—մաղձ։

## 18. ՏՈՒՆ։

Մա սունք—տան—են—հիմն , —որ—մունք,—ա-
ռաս տաղ , —դուռն, —լու սա մուտ, —յա տակ ։
Հիմն—լի նի —վասն—հաս տա տու թեան , —դու-
ռըն՝ —վասն —եր թե ւե կու թեան —և—փա կե-
լոյ։ Լու սա մուտն՝—վասն—լու սա ւո րու թեան։
Առաս տաղն՝—վասն—խա փա նե լոյ—զանձ րև,
զ ձիւն,—զ կար կուտ,—զ ջեր մու թիւն—և զ ցըր-
տու թիւն։ Ի—տան—տե սա նեմ—ընդ սրահ , —ընդ
ապ րիսակ,—ընդ մա ռան,—զա թառ, ընդ խա հա նոց,
ընդ զա նա զան—սե նեակս, ուր գտա նին աթոռք
ու սե ղանք,—նստա րանք,—հա յե լիք,—պատ կերք,
վա ռա րան ,—խա րոյկ , —հնոց , —պա հա րան ,
պաստու հան,—ար կըղ , —ծա ռայ,—սպա սա ւոր,
ա ղա խին։

Սրահն —լի նի—վասն—շր ջե լոյ—և—պա հե լոյ
անդ—զի րս.—ապ րիսակն՝—զի—մի—օտարք— մտցեն

ան՛գ.—մա ռա նըն՝ —վասն —պաշ պա նե լոյ—զու
տէլիս և զըմպելիս,—ուր և գտա նին—տա կառք,
զամբիւղք,—տաշտք,—կարասք,—կճուճք.—ախո-
ռըն—լի նի —վասն —ա նաս նոց.—խո հա նոցն՝
վասն —պատ րաս տե լոյ—ըզ կե րա կուրս. —սե-
նեակք՝ —վասն —ընա կու թեան .— ամ թառ ք—և
նստա րանք՝—վասն—նստե լոյ. —սե ղանն՝ —վասն
ու տե լոյ—և—գրե լոյ:

## 19. ՕՐԱԿԱՆ ԳՈՐԾՔ ԵՒ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ:

Յա ռա ւօ տու—զարթ նումք—'ի—քնոյ,—յառ-
նեմք—յան կողնոյ, —լուա նամք—զ ձեռս—և—զե-
րեսս, —սանտ րեմք—զ գլուխս, —ըզ գե նումք —ըզ
համ դերձս,—(ըմ պեմք—զ չոյ), —նա խա ճա շեմք,
ապա իւրա քանչիւր—ոք—գնայ—զ հետ—գոր ծոց
իւ րոց:Վ ա ճա ռա կանն—եր թայ—'ի—կըր պակն
առ— 'ի առ նել—զ ասուր և ա ռու թիւն : Աս-
տի ճանաւորք—գնան —'ի դի ւա նա տունս — առ
'ի պա րա պիլ: Ա շա կերտք —գնան — 'ի վար-
ժա տունս—առ 'ի ու սա նիլ. —դաս տի ա րակք՝
առ 'ի ու սու ցա նել:

Երկ րա գործք —դի մեն—'ի—դաշտն . —առ 'ի
հեր կել—զեր կիր : Ի ճա շուն—ճա շեմք : Յե րե-
կո յին —ժո ղո վիմք — միւ սան գամ—'ի տուն,

զրու ցեմք,—ըմ պեմք ըզ չոյ,—ընթ րեմք ,—ա պա ննջեմք առ 'ի հան գիս տա նալ ։ Վասն—ննջե-լոյ—հար կա ւոր—է—հանգս տա րան,—ան կո ղին, վեր մակ,—բարձ։ Ի նըն ջելն—և—յառնելն—պար-տի—բա րե սընունդ—ե րե խայն—միշտ—ա ղօ թել։

## 20· ՔԱՂԱՔ։

Քա ղաք—ան ու անի—այն ալի սի—տե ղի.—ուր գոն —բա զում—տունք ,—ե կե ղե ցիք,—դի ւա-նա տունք,—կըր պակ.ք,—ի րա ւա րանք։ Յա մե-նայն—քա ղա քի—գոն—բա զում —և—զա նա զան վի ճա կք—մարդ—կան.—այն—է՝—իշ խանք,—ազ-նուա կանք ,—աս տի ճա նա ւորք ,—զին ուո րա-կանք—և—քա ղա քա կանք ,—հո գե ւո րա կանք, .քա ղա.քա ցիք ,—ար հես տա ւորք —վա ճա ռա-

կանք։

Իշ խանք և ազ նուա կանք.—և աս տի ճա նա-ւորք—ա ռաջ—են—յա մենայն—հար կա պա հան-ջու թե նէ ։ Հո գե ւո րա կանք—կա տա րեն—ըզ պաշ տօն—ե կե ղեց ւոյ —և—են— արք—ե պիս կո-պոսք,—ե պիս կո պոսք,—վար դա պետք,—քա հա-նայք ,—ա ւագ սար կա ւագք .—սար կա ւագք , դպիրք,—գլ խա ւորն—է— կա թու ղի կոսն։ Ար-հես տա ւորք—են—կօշ կա կարն,—դեր ձակն,—դար բինն,—բրուտն,—փա կա նա գործն,—ժա մա գոր-

ծըն,—հիւսն։ Վա ճա ռա կանք—նստին—'ի—կըր-
պակս.—և—վա ճա ռեն—զ գա նա զան—ապ րանս։
Գլ խա ւորն—ա մե նե ցուն—է—կու սա կալն,—ա-
պա—գա ւա ռա պետն.—և—քա ղա քա պետն։

Հան դի սա ւոր—ա ւուրք—'ի—տա րւոջ—են
նոր—տա րին, Ծնունդն—Ք րիստոսի,—Ջըր օրհ-
նէք,—Զա տիկ,—Համ բար ձումն ,—Հո գե գա-
լուստն—կամ—Պէն տե կոս տէ,—Այ լա կեր պու-
թիւն ,—Վե րա փո խումն—Սրբոյ —Կուսին
և—Վե րա ցումն—Խա չի։

## 21. ԵՐԿԻՆՔ ԵՒ ԱՐԱՐԱԾՔ։

Հա յեաց՝ —սի րե լի —ե րե խայ՝ —յեր կինս.
քա նի՞ —զար մա նա լի —աս տեղ.ք —ճա ճան չին
անդ—'ի գի շե րի ։ Ո՞ր պէս—հրա շա փառ—լու-
սա փայ լի—արե գակն—'ի —տը ւըն ջեան ։ Քա-
նի՞—զար մա նա հրաշ—և—երփ նե րանգ—են—ծա-
ղիկ.ք և տունկ.ք—'ի—դաշ—տըս, —յանդաս տա-
նըս,—'ի—հո վիտս,—յայ գիս—'ի լե րինս ։ Ո՞ր-
պի սի—ա նու շա հո տու թիւն—բու րէ —'ի .քիմս
մեր։ Հիմ—զուար թա րար—է—ցօղն—ա ռա ւօ-
տեան,—հովն—զար նա նա յին ։ Զի ա՞րդ—քաղց-
րա հըն չիւն—են եր գ.ք—ա ղը բե րաց, հո գե զմայլ՝
նը ւագ —թըռչնոց —յան տառս —և —'ի ձորս ։

Զօ յս—ա մե նայն —վաան —մեր—ս տեղծ—ա մե-
նա քա րե գութ—Ա. բա րիչն—'ի—մը խի թա բու-
թիւն—և—'ի—վա յել չու թիւն: Ա ի րեա և պատ-
ու եա—զա նուն—նա բա—'ի—սիրտս—քոյ—ջեր մին
գո հու թեամբ:

## 22. ԱՌԱՐԿԱՅՔ, ՈՐՔ ՇՈՒՐՋ ԿԱՆ ԶՄԵՕՔ:

Յե կե ղե ցիս տե սա նեմք—ըզ սե ղան, ըզ բե-
մըն,—ըզ խո րան,—ըզ վեր նա տուն,—ըզ գիրս, ըզ
գրա կալս, զա ւե տա րանս,—ըզ խաչս,—ըզ խաչ-
վառս, ըզ ճրագս,—ըզ ճրա գա կալս, ըզ չուր ջա-
ռըս,—ըզ գեստս,—զու րար,—ըզ ժա մա չա պիկ,
ըզ թագ, ըզ սա ղա ւարտ, ըզ բուր վառ, ըզ պատ-
կերս,—ըզ գաւս,—ըզ կան թեղս,—զիւ ղա բե րիս,
զաշ տա նակս,—զ.քշոց—և—զայլ—բա զում—զար-
դըս: Յե կե ղե ցիս—կա տա րին—ժա մեր գու-
թիւնք,—պա տա րագ,—տօ նախմ բու թիւն,—
թա փոր,—մկր տու թիւն,—գրոշմ,—ձեռ նա դը-
րու թիւն,—օ ծու թիւն,—պսակ,—խոս տո վա-
նու թիւն,—ապաշ խա րու թիւն—և—հա ղոր դու-
թիւն:

Յայ գիս—տե սա նեմք—զ ծառս,—զ ծաղ կու-
նըս,—զ խոտս,—զ կա նաչիս,—զ մարգս,—զ ցիցս,
զ հըն ձան.—զա ռա գաստ,—զայ գե պան:—Այ-
գին—պա տեալ—կայ—ցան կով.ք:—Ծառ.ք—են-

ըն կու զե նի ,—խնձո րե նի ,—տա:ն ձի ,—շղո րի ,—
ու ռի ,—բար դի ,—որթ—խա զո ղոյ ,—սեր կեւիլի:

Հան դերձք—իմ`—են`—գդակ ,—չու խայ ,—ար-
խա լուղ ,—շա պիկ ,— յո րոց—ո մանք—բրդեայ—
են,—ո մանք`—մե տաք սեայ. և ո մանք—բամ բա-
կեայ :—Գտակն—է—մոր թեայ :—Շա պիկն—իմ
է—կեր պա սեայ .—Թուղթս—այս,— յո րոյ—վե րայ
գրեմ,—չի նի—'ի—Հին—շո րից :—Սե ղանն—յո րոյ
վե րայ—ու սա նիմ ,—չի նի—'ի—փայ տէ :—Տունն,
ուր—բնա կիմ,—չի նի—'ի—քա րանց ,—'ի—փայ տէ
և—'ի տախ տա կաց :



# ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ։

## 23. ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄ ԵՐԵԽԱՅՆ։

Յովհաննէսը մէկ քանի երեխայից հետ քուչումն ('ի փողոցին) խաղում էր։ Էս միջոցումն մէկ անծանօթ ճանապարհորդ եկաւ և հարցրեց նրան էն գիւղի ճանապարհը, ուր ինքն կամէր գնալ։

Յովաննէսը իսկոյն յառաջ եկաւ և էն մարդին ասաց։ «Ես կամիմ քեզ էն գիւղի ճանապարհը ցոյց տալ, որ դու էլ չես կարող մոլորել։ Յետ այսորիկ գնաց օտարականի հետ և 'ի հեռուստ ցոյց տուեց նրան, ուր էր գիւղն։

Ճանապարհորդը քաղաքավարութեամբ շնորհակալ էլաւ և կամէր բարի երեխային իւր աշխատութեան համար փող բաշխել. բայց Յովհաննէսն ոչինչ չառաւ և ասաց։ «Ինձ շատ ուրախութիւն էլաւ՝ որ քեզ կարացի էս ծառայութիւնը ցոյց տալ։ Ինձ ոչինչ չէ հարկաւոր։ Կա՛ց բարեաւ և գնա՛ խաղաղութեամբ, ուր կամիս։

## 24. ԱԶԿԱԾԱԿ (ագահ) ԱՂՋԻԿ։

Պառաւ կին մի բարի՝ գնայր յեկեղեցին. ճանապարհն սառեալ էր, ոտը սահեցաւ, ողորմելի կինն անկաւ և ոչ կարէր ինքն միայն կրկին վեր կենալ (յառնել)։

Շուշան՝ երկոտասանամեայ աղջիկ մի՝ նրա մօտովն անցկացաւ, պառաւն աղաչեց՝ որ իրան օգնի։ Շատ լաւ՝ ե-

թէ ինձ մէկ գրօշ կտաս, քեզ կօգնեմ: Եւ ճշմարիտ չօգնեց նրան, մինչեւ որ ողորմելին մէկ գրօշ չտուեց:

Ամօթ այնպիսի ագահ երեխային:

## 25. ԱՆԶԳՈՅՇ ԵՐԵԽԱՅ:

Մէկ երեխայ մէկ օր միայնակ հաց էր ուտում, որովհետեւ ծնողքը այլ տեղ էին գնացել: Երբ կշտացաւ, վեր ելաւ լուսամուտը (փանջարէն) և կամէր դուրսը նայել:

Անզգուշութեամբ պատառաքաղը (չանկալը) ձեռին ունէր բռնած, լուսամուտից վէր ընկաւ և աջոյ ձեռան մընաց պատառաքաղի վրայ: Պատառաքաղը մտաւ աչքը: Նրա կսկիծը և ցաւը ո՞վ կարէ պատմել: Յետ ժամանակի էս աչքը մնաց կոյր:

Էս պատճառաւ են արգելում ծնողքը, որ պատառաքաղ, դանակ կամ այլ սուր բան ձեռք չի առնենք և նրանց հետ աստ և անդ չխաղանք: Նոքա վախենում են, թէ մեզ ևս էսպէս փորձանք կըպատահի, որպէս էն ողորմելի երեխային:

## 26. ԱՆԿՈՒՇՏ ԵՐԵԽԱՅ:

Մէկ երեխայ իր հօրից բալ խնդրեց: Շատ բարի, պատասխանեց հայրը՝ և մէկ բուռը լիքը բալ տուեց նրան: Երեխէն կրկին խնդրեց: Հայրը միւս անգամ էլ տուեց: Յետոյ երրորդ անգամ սկսաւ խնդրել: Բայց հայրըն ասաց՝ որ բաւական է, և թէ շատ բալը նրան վնասակար է. բայց երեխէն լալիս էր և գոռում: «Բա՛լ եմ ուզում, բալ»: Հայրը բարկացաւ, ձեռքին առաւ՝ ինչ-

քան էլ որ ունէր և պատժեց նրան իր անկարգութեան խաթեր։

Ինչ որ քեզ տալիս են, առ շնորհակալութեամբ և բաւականացիր։ Ով բաւական չի, արժանի էլ չի՝ որ կրկին ստանայ։

## 27 ԽՌՈՎԱՍԷՐ ԵՐԵԽԱՅՆ։

Մէկ երեխայ իր եղբարց և քվերտանց հետ երբէք քաղցրութեամբ չէր վարւում։ Միշտ կռվում էր նրանց հետ, հայհոյում էր, անարգում և ծեծում՝ եթէ իր կամքը չէին կատարում։ Ծնողքը շատ անգամ պատժեցին նրան էս չար բնութեան խաթեր, բայց նա էս վատ սովորութիւնիցը ձեռք չէր վերցնում։ Երբ մեծացաւ, կռվասիրութեան խաթեր ամէն մարդ նրան ատում էր և շատ անգամ արինաթաթախ գլխով էր տուն գալի։ Բայց էս էլ նրա բնութիւնը չփոխեց։

Մէկ անգամ էլ անխրատութեամբ սկսաւ կռիւ քցել մէկ քանի երեխայից հետ, և որովհետև մութն էր, էնպէս սաստիկ խփեցին նրա գլխին, որ մէկ քանի օրից յետոյ շատ ցաւով մեռաւ։

## 28· ԽԱԲԷՈՒԹԻՒՆ։

Մէկ երեխայ մէկ ամառուան իրիկունը իրանց դռանը նստած, սպասում էր՝ որ հայրը տունը գայ։ Էս միջոցումը մէկ չար տղայ եկաւ նրա մօտ և գլխից հանեց նրան՝ թէ գնանք գետը և տափի վերայ խաղանք՝ որ գետի զըաղըն կապած էր։

Էն երեխէն էնքան յիմար էր՝ որ սկսաւ տափը յետ

անիլ, բայց լոտ որում ո՛չ էնքան կարողութիւն ունէր և ո՛չ ճարտարութիւն, որ ափը կառավարի կամ ղայիմ բռնի, ջուրն սկսեց քշել և գետի ափիցն հեռացնիլ. և երեխայքն մնացին մեծ վտանգի մէջ: Նրանց բախտից ջաղացպանն տեսաւ նրանց փորձանքը և շուտով մէկ նաւի մէջ նստած՝ շտապեց՝ որ նրանց օգնութիւն հասնի: Նրանք ազատվեցան և խաբված երեխայն՝ որ շատ վախեցել և ռանգ մուանգը թռել էր, իր հօրից սաստիկ պատիժ ստացաւ՝ որ էնպէս ուրիշից խաբվել էր: Եթէ չար երեխայք կամենան քեզ խաբել կամ գլխից հանել, նրանց խօսքին մի՛ հաւատար:

## 29. ՀԵՏԵՒԱՆՔ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ:

Յակովբն շատ ուրախ երեխայ էր, բայց մէկ վատ պակասութիւն ունէր: Եթէ նրա հայրը կամ մայրը կամ վարժապետը մէկ գործ նրան արգելում էին, նա իսկոյն մոռանում էր նրանց պատուէրը և իր ուզածն էր անում: Նոյնպէս կամենում էր միշտ իմանալ՝ թէ ի՞նչ պատճառաւ նրան էս կամ էն բանը արգելում էին: Բայց չէ կարելի երեխայից ամէն բանը միշտ հասկացնել: Լսեցէք ուրեմն, թէ նրան ի՞նչ պատահեցաւ:

Մէկ օր կամենում էր վարժատունը գնալ և էն գիշերը շատ սաստիկ սառել էր: Տանից ելնելիս հէրն էլի ասաց՝ որ էն օրը սառցի վրայ չգնայ:

Բայց Յակովբը էս արգելմունքը մէկ ականջով լսեց, ու միւսովն հանեց: Հէնց մօտացաւ մէկ լճի (գեօլ) թէ չէ, իսկոյն իւր հօր խրատը մոռացաւ և սկսեց գնալ սառ-

ցի վերայ՝ որ էնքան էլ հաստ չէր:

Հայրը յետևուստ նայում էր: Հէնց ինչպէս վտանգը տեսաւ՝ ձայն տուեց բարձր ձայնիւ և սարսափմամբ· «Յակովբ էջ 'ի վայր»:

Յակովբ իւր հօր ձայնը լսեց, բայց փոխանակ շուտով 'ի վայր իջանելոյ, մնաց սառցի վերայ և կրկին ձայն տուեց: «Վան էր հայր իմ»: Հայրն կամէր պատճառն ասել, բայց յանկարծ սառոյցը ջարդեցաւ· Յակովբ ընկաւ մէջը և խեղդուեցաւ չարաչար:

Մտածեցէք ուրեմն նրա ողորմելի ծնողաց կսկիծը և վիճակը: Եթէ ծնողք քո՝ քեզ մէկ բան արգելեն, հնազանդիր առանց հարցնելու վա՞ն էր և ի՞նչ պատճառաւ:

## 30. ԽՐԱՏԻ ԱԿԱՆՋ ԱՌ՛

Մէկ երեխայ շորերը հաքնելիս կամ հաց ուտելիս, վատ սովորութիւն էր արել իրան՝ ասեղ կամ քորոց բերանն էր քցում և պահում: Մայրը շատ անգամ նրան սաստիկ բարկացաւ և խրատ էր տալիս՝ որ չանի, բայց յիմար երեխէն ամենևին չլսեց և միշտ իր ասածն էր անում:

Մէկ օր էլ էսպէս ասեղը բերնումն խաղացնելիս, նրա եղբայրը տուն մտաւ և երեսը էնպէս սևացրել էր՝ որ տեսնողը ծիծաղու մեռնում էր: Խաչուր վրայ էնպէս սկսեց սաստիկ ծիծաղել՝ որ ասեղը մոռացաւ և կուլ տուեց:

Իսկոյն լալով վազեց մօր մօտ և պատմեց իր ցաւը: «Սիրելի մայր՝ օգնեա ինձ, մեռնում եմ», ասում էր և գոռում: Ուշագնայ մայրը իսկոյն մարդ ուղարկեց բժշկի

մօտ, որ շուտով եկաւ և շատ հնարք գործ ածեց՝ որ նրան ազատի, բայց չկարաց: Ասեղը մնացել էր ստամոքսումը ցցուած և թեթևամիտ երեխայն մէկ քանի օրից յետոյ՝ շատ տանջուելով և չարչարվելով հոգին աւանդեց:

Ո՞վ կարէ պատմել նրա խեղճ մօր վիճակը և կսկիծը, էլ աչքումը լոյս չմնաց, էնքան լաց էլաւ:

## 31. ԱՆԶԳՈՅՇ ԵՐԵԽԱՅՔՆ:

Մէկ օր կէս օրի ժամանակին յանկարծ մէկ լացի ձայն ընկաւ ականջս: Լուսամուտը նայեցի՝ տեսայ որ իմ տանիցը փոքր ինչ հեռու՝ շատ խալխ (բազմութիւն) էին հաւաքվել: Մօտանամ տեսնիմ, որ մէկ փոսի միջում, ուստի շատ հող էին կորել, ոմանք լալիս և իրանց կրտրատում էին, ոմանք թիով հողը յետ էին տալիս:

Հարցնեմ իմանամ՝ որ երկու երեխայ վերևը խաղալիս, հողը փլել էր և նրանց տակովն արել: Շատ ծնողք լալիս էին և չէին գիտում՝ թէ ո՞ւմ էին երեխայքն:

Վերջապէս շատ աշխատութիւնից ետև, մէկի ձեռքն երևեցաւ և միւսի գլուխը: Շուտով հողը յետ ածին և նրանց հանեցին. բայց ի՞նչ օգուտ: Գլուխ, երես և բոլոր մարմինը ջարդվել. փշրվել էին, արիւնները ցամքել և ռանգը (գոյն) կտաւ էր դարձել:

Ողորմելի ծնողքը ուզում էին իրանց սպանեն: Հայրը խատել (գրկել) համբուրում էր, դռռում, գլուխը ծեծում, բայց ամէնն անօգուտ: Քուքուրթ (ծծումբ) ծխեցին, արիւն առան, բոլոր ընդ վայր: Էնպէս ճչալով, մղկտալով տարան նրանց տուն և միւս օրը թաղեցին:

Սիրելի երեխայ. Քո ջահել հասակին և քո խեղճ ծնողաց ամակին (երախտեաց) խեղճ արի։ Խաղալիս էլ՝ էնպէս բան մի՛ բանիր՝ որ քեզ էսպէս փորձանք հանդիպի և ողորմելի ծնողքդ էսպէս տանջվին և մաշվին։

## 32. ԱՆՀՆԱԶԱՆԴ ԵՒ ԸՄԲԱՍՏ ԵՐԵԽԱՅՆ։

Մէկ խղճալի այրի կին երկու տղայ ունէր։ Մեծին ուղարկել էր մեր վարժատունը՝ որ կարդայ, ուսումն առնի և ժամանակին մէկ մարդ դառնայ։

Բայց նա փոխանակ վարժատունը գնալու, փախչում, անկարգ երեխայից մօտն էր գնում, կամ քուչումն էր խաղում, կամ այգին էր գնում, կամ Քռումը լողանում։ Մանաւանդ լողանալը նրա մեծ փէշակն (արհեստ) էր։

Մէկ օր էլ հացն ուտում է թէ չէ՝ մօրն ասում է՝ թէ վարժատունն եմ գնում։ Մէկ ժամից յետոյ՝ Աստուած ոչ շհանց տայ՝ յանկարծ մայրը տեսնում է՝ որ մեծ բազմութիւն իրանց տունը թափեցին։ Լեղապատառ դուս է ընկնում՝ որ պատճառն իմանայ, բայց էլ ինչ խելքը ու ուշքը թռչում ա՝ որ բակումն իր որդուլաշն (մարմինն) ընկած տեսնում ա։ Հարայ, դատ, դոռաց, աշխարհը ամէնը ժողովեցան, հէքիմ էկաւ, հազար մէկ հնարք փորձեցին, բայց բոլորն անօգուտ։ Միւս օրը տարան թաղեցին։

Եւ բոլոր էսքան տարաբախտութեան պատճառը լողանալն էլաւ։ Ես էս որքան խրատել էի նրան, որ զգոյշ լինի․․ բայց անհնազանդ երեխայի համար խրատը քամու (հողմ) պէս փչի և գնայ։ Քանի՜ քանի էսպէս օրինակ-

ներ պատահել են աստ, բայց անմիտ երեխայք էլի զգուշանում չեն: Դու իմ սիրելի երեխայ՝ գիտեմ՝ որ էսպէս վատ բանը դու չես կամենալ և ծնողացդ պատուիրանին հնազանդ կմնաս:

## 33· ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՎԱՏԹԱՐ ՀԵՏԵՒԱՆՔԸ:

Ստեփանն բարի երեխայ էր, ուրախութեամբ էր գընում վարժատունը. իր դասին շատ մուղայիթ էր (արի) և իր պակասութիւնքը օրըստօրէ ուղղում էր: Բայց բարկութիւնից յերկար ժամանակ չկարաց ձեռք վերցնել: Մէկ փոքր բան պատահելիս, այնքան էր բարկանում, գոյնը, կերպարանքը փոխում. որ էլ բերանը խօսք չէր գալիս: Ծնողքը և վարժապետը շատ անգամ խրատում էին նրան՝ որ էս վատ սովորութիւնը թողայ, բայց անօգուտ: Բայց մէկ օր էլ էնպէս մէկ բան բռնեց՝ որ մինչև մահը մտքիցը չէր գնում:

Նրա ընկերի մէկը՝ մէկ օր էկաւ՝ որ նրա խնդրի՝ իրար հետ գնան բաղը (այգին): Ստեփանն էս միջոցումն իր ընկերին ականջ էր անում: Ընկերը նորա փէշէցը բռնեց և ձգեց՝ որ շուտով գայ, բայց Ստեփանը այնպէս բարկացաւ՝ և ընկերին էնպէս սաստիկ խփեց (եհար)՝ որ քամակի վրայ վէր ընկաւ. գլուխը քարին դիպաւ և մնայ ողորմելի երեխէն էնպէս մերձ 'ի մահ ընկած: Արիւնն գետի պէս թափում էր: Գոյնը թռաւ երեխի, միմիայն կամաց հոգոց էր հանում:

Ստեփանի ուշքը ու խելքը թռաւ: Ինքն ևս ընկալաւ իր խեղճ ընկերի վրայ ու սկսաւ գոռալ: «օգնեցէք օգնեցէք

մեռաւ ընկերս մեռաւ: Ես սպանեցի»: Ասում էր և գը-լուխը ծեծում, չունքի նրան շատ էր սիրում: Աստուծոյ ողորմութիւնիցը վարժապետը լուսամուտի մօտ կանգնած էր: Հէնց լսեց էս ձայնը, իսկոյն դուս վազեց, երեխէն ներս բերեց ու սկսաւ սառը ջրով գլուխը, երեսը լուանալ: Մէկ քանի ժամանակից յետոյ հիւանդը սկսաւ շունչ քաշել, ուշն էկաւ, բայց էնպէս մէկ սաստիկ տաքութիւն էկաւ վրէն՝ որ քանի մի ամիս՝ էլ նրան ոչ գիշերը՝ ոչ ցերեկը հանգստութիւն չէր տալիս:

Ողորմելին անդադար դէլն էր տալիս: Միշտ ասում էր, «սիրելի Ստեփան՝ քեզ ի՞նչ արի, ինչո՞ւ ես ինձ էդպէս սպանում: Միթէ քո ընկերը չե՞մ: Ների՛ր ինձ, ես յանցաւոր եմ քեզ մօտ, էլ չեմ անիլ»: Էս խօսքերը մանաւանդ Ստեփանի սիրտը այրում փոթոթում էին: Ցառաւօտէ մինչև 'ի մութը նրա մօտին նստած հոգոց էր հանում և լալիս: Անպատմելի էր նրա կսկիծը և ցաւը:

Վերջապէս հիւանդն հետ զհետէ լաւացաւ: Տաքութիւնը թողեց և քիչ քիչ կերակուր էր ուտում: Ինչ ժամանակ իսպառ լաւացել էր, Ստեփանն էն վախտն էլ չէր կարողանում հանգստանալ և իր արածը մոռանալ: Քանի նրան տեսնում էր, փաթաթվում էր, էն եարի (վէրաց) տեղը համբուրում և ներողութիւն էր խընդրում:

Էս ժամանակից սկսած՝ Ստեփանն իր մտքումը դրեց, որ ինչ էլ որ պատահի, չբարկանայ, և որքան էլ բնութիւնն քաշում էր, նա իրան սկսում էր յաղթել, էնպէս որ՝ համարեա թէ վերջը գառն էր դառել: Էլ մէկ ընկերի

սիրտ չէր վիրաւորում, մէկի վնաս չէր տալիս, չէր կռւում, ինչ որ պատահում էր: Դու և՛ս սիրելի երեխայ, էս տեսակ վատ սովորութիւն ունենալիս, ջանք արա՛ որ քեզանից հեռացնես: Որ յետոյ չի փոշմանես և ցաւ քաշես:

## 34. ԱՐԴԱՐԱՄՏՈՒԹԻՒՆ:

**Մ**էկ աղքատ տղայ՝ Գէորգ անուն՝ ծնողք չունէր և իր օրական հացը դռնէ դուռը ման էր գալիս և ուզում. որովհետև էն քաղաքումը, որ նա կենում էր, աղքատաց տուն չկար: Անգամ մի քուչումը մէկ երևելի մարդու պատահեցաւ և ողորմութիւն խնդրեց նրանից: Սա կամենալով նրան փող տալ, ձեռը ջէբը (գրպանակ) տարաւ, բայց տեսաւ՝ որ իր բոլոր փողը խարջել էր:

Բայց որովհետև երեխէն նրան էնպէս քաղցր դիմօք նայում էր, չկամեցաւ՝ որ նրան առանց ողորմութեան թողի: Էս պատճառաւ քիսէն հանեց, մէկ ոսկի տուեց նրան և ասաց, «գնա՛ էս ոսկին խուրդայ արա, յետոյ քեզ դրանից փոքր կտամ:

Գէորգ վազեց մօտիկ դուքանը (կրպակ) և փողը խուրդայ արեց և երբ վերադարձաւ, էն երևելի պարոնը էլ էն քուչումը չէր: Եթէ նա վատ երեխայ լինէր, փողը կառնէր և կփախչէր տուն, բայց Գէորգ միտք արեց: Լաւ է աղքատ մնալ աշխարքի վրայ, քան թէ գողութեամբ հարստանալ:

Էնպէս սկսաւ էն պարոնին պտրտել, մինչև նրան մէկ ուրիշ քուչում գտաւ: Պարոնն՝ էս աղքատ երեխի արդարամտութեան վրայ մնաց զարմացած և նրան համար

պարտաւորութիւն համարեց, նրան մէկ հացի տիրացընի: Էստուր համար նրան մէկ արհեստաւորի տուեց, և նա էս արհեստը սովորեցաւ և յետոյ իրան համար լաւ մարդ դառաւ: Վերջին ժամանակն էլ իրան էնպէս արդար բանում էր, ամէն մարդ սիրում, գովում և արդար ուստայ էին ասում նրան:

## 35. «ԵՍ ՉԷԻ ԿԱՐԾՈՒՄ»:

Տղայ մի իրան համար մէկ վատ սովորութիւն էր արել՝ որ ինչ տեղ մէկ շուն տեսնում էր, նրան կամ քարով հետ էր անում, կամ յանկարծ փէտով խփում: Էս շատ չար ստահակութիւն էր՝ որ մէկ անգամ նրան մեծ փորձանքի պատահացրեց: Մէկ անգամ էլ՝ էլի էնպէս մէկ մեծ շան վրայ քար քցեց, շունը յետ դարձաւ, նրան բռնեց, գետնին զարկեց և ոտը սաստիկ կծեց: Մարդիկ վրայ թափեցին և պրծացրին: «Ես չէի կարծում, թէ շունը էսքան կատաղած և չար կըլնի», ասաց և կաղալով գնաց տուն:

Փոքր ժամանակից յետոյ մէկ ձիու մօտով անցկացաւ և ղամչով խփեց նրան: Ձին ետի ոտովն էնպէս սաստիկ քացի տվեց նրա գլխին, որ անշունչ և մերձ'ի մահ մնաց էնտեղ ընկած:

«Ես չէի կարծում, թէ ձին էսքան չար կլինի», պատասխանեց, ինչ ժամանակ ծնողքը նրան պախարակում էին:

Հազար տեսակ փորձանք գլխին էկան, բայց միշտ ասում էր, «ես չէի կարծում, թէ էսպէս կլինի»: Բայց բը-

նաւ խելքի չեկաւ: Երբ որ մեծացաւ՝ սկսեց իրան արբեցութեան տալ և զանազան չար ճանապարհի հետեւիլ: Նա հիւանդացաւ, սկսաւ սաղ սաղ ցամաքվիլ և մեռաւ քսան և մի տարեկան:

«Ես չէի կարծում, թէ էսպէս շուտով կմեռնեմ» ասէր, նոյնպէս և այժմ, տեսնելով՝ թէ մահը ջանն առել է:—«Մենք լաւ իմանում էինք՝ ասացին խելացի մարդիկը՝ որ դու էսպէս պէտք է փչանայիր և ոչ այլ կերպով»:

## 36. ՓՈՔՐ ՂՈՒՇ ԲՌՆՈՂԸ:

ՊԵՏՐՈՍ.

Շունչը կտրած տուն վազելով՝ ասէ «մա՛յր իմ, մա՛յր. մէկ մտիկ արա՛ էս պչլին՝ որ բռնել եմ, լաւ չի՞»:

ՄԱՅՐՆ.

Ո՞վ տուեց քեզ էդ. ղուշը՝ սիրելի որդեակ՝ ասաց մայրը. Դո՞ւ ես բռնել: Ի՞նչպէս ձեռք բերիր:

ՊԵՏՐՈՍ.

Մեր բաղի պատումն էս օր մէկ բուն գտայ և էնքան մնացի մինչև մթնացաւ, յետոյ կամաց գնացի և ղուշը դեռ չիմացած, թէզ թևիցը բռնեցի և կալայ:

ՄԱՅՐՆ.

Էլ ի՞նչ կար բնումը:

ՊԵՏՐՈՍ.

Նրա ձուտերն էին էնտեղ, սիրելի մայր իմ. ա՛խ՝ էնպէս պստիկ ղուշ էին և հլայ թև չունէին:

ՄԱՅՐՆ ։

Ի՞նչ ես ուզում հիմիկ էդ ղշին անել։

ՊԵՏՐՈՍՆ ։

Կամենում եմ մէկ ղաֆազի մէջ դնեմ և մեր լուսամուտը կախեմ ։

ՄԱՅՐՆ ։

Բաս դրա ճտերն. էն խեղճերն ի՞նչ պէտք է անեն. ո՞վ նրանց այսուհետև կպահի, ուտելիք կտայ և կմեծացնի։ Ա՜խ ողորմելիքն պէտք է սովու մեռանին։

ՊԵՏՐՈՍՆ ։

Հէնց էս սհաթին նրանց էլ կբերեմ՝ որ մեծացնի և պահի։

ՄԱՅՐՆ ։

Սիրելի որդեակ. լսիր յառաջ ի՞նչ եմ ասում։ — Եթէ թագաւորն կամենայ այժմ ինձ՝ որ քո մէրն եմ. և քո քուերը էսպէս մէկ տեղ դնել, որ էլ՝ էն տեղաց դուս չի կարողանանք գալ, քո հալն ինչպէս կլի։ Դարդ կանե՞ս, թէ չէ։

ՊԵՏՐՈՍՆ ։

Ա՜խ՝ սիրելի մայր իմ, Աստուած մի՛ արասցէ։ Իմ հոգիս դուս կգայ. թէ որ էդպէս բան պատահի ձեզ ։ Ես սուգ կանեմ, գլուխս քարէքար կտամ, ինձ կսպանեմ, որ ձեզ մէկ չարայ անեմ ։ Ա՜խ՝ միամ մեր թագաւորը էդքան անիրաւ է, որ էդ տեսակ գործ բանի ։

ՄԱՅՐՆ ։

Բա՛ս ինչ։ Նա կանի. թէ որ նա էլ՝ էդպէս անիրաւ է՝ որ էդ տեսակ գործ բանի, և անգութ լինի, ինչպէս դու

էդ ողորմելի դշի և դրա ձագերի համար: Այժմ էլ կուզե՞ս գնալ և դրա ձագերն բերել՝ որ ղաֆազի մէջ պահես:

ՊԵՏՐՈՍ:

Ո՛չ, ո՛չ, սիրելի մայր իմ. էլ չեմ անիլ: Ներեցէք ինձ՝ որ ես անխղճմտանք վարվեցայ էս խղճալի անասնոց հետ: Ես էդ բանը չէի մտածում, ապա թէ ոչ, երբ կանէի: Հէնց էս սհաթին սրան կթռցնեմ. որ կ[illegible] իր ձագերի մօտ գնայ և նրանց պահի:

ՄԱՅՐՆ:

Շատ ապրիս. խելօք, էդ շատ լաւ բան է: Մի մոռանար՝ թէ կենդանիքն էլ էնպէս, ինչպէս մարդը՝ Աստուծոյ ստեղծուած են և պէտք է իրանց կեանքը վայելեն և ուրախանան: Եւ թէ մենք շատ փիս մարդ կլինինք, եթէ նրանց նհախ տեղը չարչարենք և նրանց օրը կարճացնենք:

Մէկ կենդանի էլայ նհախ տեղը մի՛ չարչարիր, չունքի նրանք էլ են ցաւ ու նեղութիւն զգում, ինչպէս մարդը:

## 37. ՇՈՔԱԾ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՍԱՌԸ ԲԱՆ ՉԻ ՊԷՏՔ Է ԽՄԱԾ:

Մարտիրոսը մէկ քանի՝ հարևանի երեխայից հետ խաղ էր անում: Ցետոյ սկսան պար գալ ու շատ շոքեցան: Մարտիրոսն էնպէս քրանաթաթախ վազեց աղբրի մօտ, և մէկ լաւ կուշտ փորով ջուր խմեց: ընկերները շատ զոռ արին՝ որ չգնայ, բայց նա ականջ չի՛ արեց:

Միւս օրը սկսաւ լալ և սուգ անիլ՝ թէ գլուխս ցա-

ւում է և սիրտս կոտրատվում: Նա յոյս ունէր՝ թէ մէկ քանի օրից յետ լաւ կլինի, բայց սրա տեղը օրէցօր նրա հալը վատացաւ:

Մարտիրոսի ծնողքը բժշկին կանչեցին, դեղ տվեց, շատ էլ ջաֆայ քաշեց, բայց յետոյ ասաց՝ որ էն դեղերը նրան ճար չեն անիլ, չունքի նրա հիւանդութիւնը բաբակացաւ էր դա[illegible]: Եւ էնպէս էլ էլաւ: Մարտիրոսն օրէց օր թուլացաւ, [illegible]նեցաւ, շունչը կարճացաւ, որովհետև բողազն ուռել էր: Վերջապէս կէս տարուց յետոյ շատ տանջվելուց և չարչարանքից յետոյ՝ մեռաւ:

Հիւանդ ժամանակը նրա ընկերքն միշտ գալիս էին նրան տեսնելու: Նրանց միշտ լալով ասում էր: Որքան ուրախ կմեռնէի և որքան հեշտ կլինէր իմ բոլոր ցաւս, եթէ ես չէի էլել իմ մահուան պատճառը:

Յետ ժամանակի, քանի որ էս երեխայքը քրտնում, շոգում և ծարաւ էին ըլում, իրանց իրանց ասում էին, Մարտիրոսի մահը պէտք է մտածել և շոգած վախտը ջուր չի խմել:

## 38· ՄՈՐԹԷ ԳՏԱԿՆ·

Մարկոսի երեխեքանց գլուխը միշտ խոցով լիքն էր ըլում: Ինչ ապականութիւն ասես, ինչ աղտեղի կենդանի, նրանց մազերումը, շորերի և ջանի վրայ շարժում էին: Ողորմելի երեխայից մարմինը բոլոր քոս էր ընկել, ռանգը (գոյնը) փոխել, դեղնել, ապրդնել էին, և միշտ քուցին էին անում:

Մարկոսի հարևանի որդւոց մազերը էնպէս էր, ինչ-

պէս ոսկի, յատակ, մաքուր, շրթերը, ձեռն ու գլուխը թամուզ:

Մէկ անգամ երկուսն էլ գնան մօտին նստել, մտիկ էին տալիս, թէ ինչպէս են իրանց երեխէքը միմեանց հետ խաղում: Մարկոսն տեսնելով իր որդւոց ողորմելութիւնը՝ ասաց իր հարևանին՝ խնդրեմ ինձ պատմես՝ թէ ինչ է պատճառն՝ որ իմ երեխէքն էսպէս աղտեղութինով լիքն են և հոտերը դուս է գալիս, բայց քոնի մազերը էնպէս մաքուր է և իրանք էսքան գեղեցիկ են:

Թէ կուզես, քեզ կասեմ՝ պատասխանեց հարևանը: Չես տեսնում. որ իմ երեխեքը միշտ բաց գլխով են մանգալիս, բայց քոնոնքը սաղ տարին գլխները մորթէ գըդակ ծածկած ունին:

Սրանով քրտինքը շատանում է գլխի վրայ և չի էլ կարողանում ցամաքիլ, էս քրտինքն է, որից որ էնքան աղտեղի կենդանիք գոյանում են: Սրանք երեխէքանց գըլուխը կծում են, նրանք էլ սուր ղնգներով քորում են, յետոյ ինչ տեսակ մուրտառ բան ասես՝ գլխի վրայ հաւաքվում են, և փորած տեղը հոտացնում. և սրանից եարայ է բհամ գալիս:

Մորթէ գտակն դէն քցեցէք, երեխայից մազը յաճախ կտրեցէք և թամբահ արէք՝ որ ամէն օր իրանց գըլուխը սառը ջրով լուանան, երեսն ու ձեռքերը մաքուր պահեն, շաբաթը գոնէ երկու անգամ փոխնորդը փոխեն, կտեսնէք, թէ ինչպէս կզօրանան և կզուարթանան նոքա և ոչինչ ցաւ էլ չեն քաշել:

Մարկոսն խելօք մարդ էր և բարի խորհուրդը միշտ ուրախութեամբ ընդունում և կատարում էր: Նա, ինչ-

պէս հարևանն սառել էր՝ ինչպէս արեց. և երեխէքը մէկ քանի ժամանակից յետոյ ինչպէս պայծառ և զուարթ էին, ինչպէս թազայ վարդը: Ցատկութիւնը մեծ առաքինութիւն է, թէ որ մարդ միշտ ունենայ:

## 39. ԱԶՆՈՒԱՄՏՈՒԹԻՒՆ:

Մէկ քաղաք կրակ էր ընկել և քիչ էր մնացել՝ որ խապառ այրուի, ոչնչանայ: Էնտեղ մէկ բան պատահեցաւ՝ որը որ իմ աչքովը տեսայ: Մէկ փոքր երեխայ մընացել էր կրակի մէջը: Բոցը չորեք կողմը բռնել էր և խղճալի մանուկն պէտք էր՝ որ չարաչար մեռանէր:

Էն երկրի Թագաւորը՝ որ շատ ողորմած էր և ամէն մարդու հօր պէս սիրում էր, տեսնելով էս տարաբախտ երեխայի հալը, բոլոր խալխը կանչեց, մօտ արեց և խոստացաւ՝ թէ ով որ նրան ազատի՝ հազար ոսկի փեշքաշ կատանայ:

Էս հաղաղին մէկ աղքատ մարդ գլուխը յետ դրեց և ընկաւ կրակի մէջը, չունքի մէկն էլայ սիրտ չէր անում: Էն սաստիկ բոցի միջովն անց կացաւ, և Աստուած նրան խեղճ գալով, նրա քաջասրտութիւնն յաջողեցաւ՝ որ էս ազնիւ գործը գլուխ տարաւ:

Աչքերը քաղցր արտասունքով լցրած՝ երեխին հանեց ու բերեց Թագաւորի առաջին դրեց: «Բարեկամ, ասաց Թագաւորը՝ քեզ մեծ պատիւ և փառք է հարկաւոր, վեր առ ինչքան կամենաս՝ մալ դովլաթ, ինչ որ ունիմ, քեզ չեմ խնայիլ»:

Ո՛չ՝ քո մեծութիւնը՝ ասաց աղքատը. Աստուած ինձ բաւական վարձատրել է՝ որ ինձ էս գործը յաջողե-

ցաւ, ու ես և էս խղճալի երեխայն կրակի ձեռիցը ազատ մնացինք: Էլ ի՞նչ կանեմ փողը կամ դովլաթը. ես էս երեխի սիրուն՝ էդ բանն արի և ոչ փողի խաթեր: Մի՞թէ յիմա՞ր էի՝ որ իմ կեանքը մէկ քիսայ փողի համար մատաղ անէի, կամ ծախէի: Էդ փողը աղքատաց տուր և խեղճերի, ես ինձ համար մէկ կտոր հաց ունիմ. ինչ բան՝ որ բռնեցի՝ իմ պարտքն էր, և այժմ դրանով էնպէս հաըստացել եմ, որ հէնց գիտեմ, բոլոր երկնային թագաւորութիւնը ինձ են բաշխել:

Լաւ վարավուրդ արէք՝ սիրելի երեխայք՝ մէկ սիրտ որ ազնիւ լինի, ինքն իրան իր վարձքը կստանայ:

## 40. ԱՊԵՐԱԽՏՆ:

Մէկ աղքատ երեխայ՝ որ հայր մայր չունէր, մնացել էր մուրացկան. Մէկ Աստուածասէր մարդ նրան իր որդու տեղը վեր առաւ և այնքան լաւութիւն էր անում նրան՝ որ իր ծնողքն էլ չէին անիլ:

Աւալի ափթայ երեխին շատ դուր էկաւ՝ նրանց մօտ կենալ և ինչ որ իր հոգևոր ծնողքը կամենում էին. միշտ նրանց քէֆումն և սրտումն էր շարժում: Էստուր համար նրանք էլ չափիցը դուրս սիրում էին. բայց փոքր ժամանակից յետոյ աչքը կշտացաւ, իր աշխատութիւնը մոռացաւ ու սկսեց իր հոգևոր ծնողացը չհնազանդիլ. նրանց չարացնիլ և վիրաւորիլ:

Շատ չալիշ էկան յառաջուց ծնողքը, խրատ տուին, դուրգուրեցին՝ որ ճանապարհ բերեն, չեղաւ: Յետոյ՝ որ չարէնքը կտրուեցաւ՝ սկսեցին պատիժ տալ. ծեծիլ.

նախատել, որ իմանայ՝ թէ չար գործը անպատիժ չի պէտք է թողած։

Վերջապէս ապերախտ երեխէն՝ իր բարերարիցը մէկ քանի թանկագին բան էլ գողացաւ ու նրա տանից փախաւ, կորաւ. բայց իր պատիժն էլ ստացաւ։ Տեղի գլխաւորը հրամայեց՝ որ նրան գտնին և ուղարկեն բանտը՝ որ երթայ էն տեղ բանի և իր չափը ճանաչի։

Ով ապերախտ է և այլոց լաւութիւն չի իմանալ, նա աշխարքիս երեսին չի՛ պէտք է կենայ։

## 41. ՍՏԱԽՕՍՆ։

Մէկ երեխայ սովորութիւն էր արել իրան՝ որ իր հօրն ու մօրը խաբի։ Մէկ բան կոտրելիս, կամ մէկ պակասութիւն արածին պէս՝ եթէ նրանք հարցնում էին, որ անողը գտնին, նա իսկոյն ուրանում էր։ Շատ անգամ ամաչում էլ չէր, ու իր մեղքը՝ իր քվէր կամ եղբօր վերայ էր քցում և նրանց պատժիլ էր տալիս անմեղ տեղը։

Մէկ օր էլ, ինչ ժամանակ էսպէս անամօթաբար իրան եղբօրը մեղ էր դնում, թէ նա բաղիցը խիար է գողցել, ծնողքը նրա սատանութիւնը և ստախօսութիւնը իմացան։ Մէրն տան կտրիցը տեսել էր՝ որ նա վեր ելաւ բաղի չափարիցը և խիարը քաղեց։ Հօրն ասեց, և սա էլ ոչ թէ մենակ սաստիկ պատժեց նրան, այլ և այնուհետև էլ նրա խօսքին չէր հաւատում։

Ուրիշ մարդիկ էլ իմացան էս բանը, ու սկսան միշտ նրան ատել, անարգել և մէկ ումքին էլայ նրան հաւատում չէր։ Բայց երբ վերջին ժամանակը վարժատանը

էս բանը կարդաց՝ թէ (ով սուտ խօսի նրան բոլոր աշխարհքը կատի) երեսը կարմրատակեց՝ չունքի բոլոր աշակերտները նրան նայեցին: էս սՀաթեցն սկսած իրան միջումն ուխտ կապեց՝ որ միշտ ճշմարիտն ասի և իր խօսքին ամուր մնաց: էս տեսանելով ամէն մարդ սկսաւ նրան կրկին սիրել և նրա Հետ քաղցրութեամբ վարվիլ:

## 42. ՃՇՄԱՐՏԱԽՕՍՆ ԵՒ ՄԻԱՄԻՏՆ :

Մէկ կանաչ տեղ մէկ քանի երեխայք իրար Հետ խաղ էին անում և թօփ (բուրթի) էին քցում: էն ուրախութեան ժամանակը թօփը դիպաւ մէկ երևելի մարդու փանջարի շուշին և ջարդեց : Նեղապատառ փախան երեխայքը, ու գնացին մէկ ուրիշ Հեռու քուչայ և էն տեղ սկսան խաղալ: էս տեղ միմեանց Հետ խօսք մին արին որ մէկը մէկին չմատնի:

Միւս օրը ինչ ժամանակ երեխայքը էլի էն կանաչ տեղը Հաւաքվեցան, էն մեծ մարդը Հրամայեց՝ որ մեծ երեխէքանցը իր մօտ կանչեն ու սկսաւ Հարցնել: Բայց մէկն էլայ չէր ուզում՝ որ անողին մատնի: Անողի անունն Պօղոս էր, և ինքն էնտեղ չէր: Բայց երբ լսեց՝ թէ երեխանցը կանչել՝ Հարցնում են, միտք արեց՝ որ լաւ չի՝ որ իր ընկերների վրայ կարծիք էին տանում: «Ես ինքս կերթամ էն մարդու մօտ. ասաց և իրան կասեմ, թէ ինչպէս պատաՀեցաւ, ներողութիւն կխնդրեմ և նրա ջառըմէն կքաշեմ, երբ փող ստանամ»:

Առանց իր ընկերացը իմաց տալու՝ որ կարելի է թէ նրան չթողէին՝ որ ասի. գնաց էն մեծ մարդու մօտ ներողութիւն խնդրեց նրանից իր պակասութեան Համար և

խօսք տվեց՝ որ ժամանակաւ նրա վնասը վճարէ :

Մեծ մարդը երեխայի էս տեսակ միամտութեան վը-րայ զարմացած՝ ոչ թէ միայն ներեց նրան, այլ և խոստացաւ՝ որ նրա բոլոր խարջը ինքն քաշէ, եթէ նա կամենայ մէկ փեշակ սովորի և վերջը մէկ հացի տէր դառնայ, չունքի լսեց՝ որ աղքատ էր : Ո՞վ չէր անիլ էն մեծ մարդու տեղը էս տեսակ բան:

## 43. ԿԱՄԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ:

Երկու երեխայ մէկ քուչում կենում էին: Նրանց բընութիւնը շատ զանազան էր իրարից : Առաջինն շատ բարի և կամակատար երեխայ էր և ամէն մարդի ուզում էր ծառայութիւն անի, երկրորդն մէկ մարդի էլայ լըսում չէր, թէ կուզ հազար անգամ խնդրում էլ էին : Առաջնոյ անունն Յովհան էր, երկրորդին Եագոր:

Յովհանն մէկ օր վարժատնը խնդրեց՝ որ Եագորը մէկ գրիչ փոխ տայ, որովհետև իրանը տանը մոռացել էր, և նա իրանքը ունէր առաջին ընկած : «Իմ գրիչքը ինձ հարկաւոր են» պատասխանեց Եագորը սառն երեսով. գընա քեզ համար ուրիշը ճարէ:

Մէկ անգամ էլ Յովհանը խնդրեց նրան՝ որ իրան օգնի և ծաղկներին ջուր ածի: «Ես հօ քո նոքարը չե՞մ, քեզ համար ծառայ բանի, եթէ չես կարում մենակ անիլ»: ասաց և հեռացաւ :

Մէկ անգամ էլ Եագորն էր իր գրիչը տանը թողել, որտում նստել մտիկ էր անում՝ որ Յովհանի գրիչքն առաջին ընկած էին և չէր համարձակւում՝ որ նրան խնդրի: Յովհանը վարավուրդ արեց, իմացաւ նրա միտքը և ա-

ասաց: «Սիրելի, ընչի՞ համար ես էդպէս տխրել, ո՞ր գլխին ուզում ես, վեր կա՛ց, երևի քո՛նը տանը մոռացել ես:

Մէկ կիրակի օր տեսաւ Նազարը՝ որ Յովհանը մէկ փունջ ծաղիկ էր քաղել իր ծաղկներից և մօր համար տուն էր տանում: «Ի՞նչ կլէր՝ որ ես էլ մեր բաղումը ծաղիկ ունենայի և իմ մօր համար քաղէի» և սիրտ չէր անում, որ նրանից ուզի, որովհետև միտքն ընկաւ թէ էն օրերումը նրան օգնութիւն չէր արել: «Եթէ ծաղկով քո սիրտը կարող եմ շահիլ՝ ասաց Յովհանը, արի գնանք մեր այգին և որքան ուզում ես՝ քաղի՛ր և քո մօր համար տա՛ր և ինչ վախտ որ կամենաս, իմ ծաղկներն էլ՝ ես էլ քեզ փեշքաշ ենք, էտուր համար քո սիրտը երբ կըկոտրեմ»:

Էս ժամանակից սկսած՝ Նազարն քիչ քիչ իր վատ բնութիւնը թողեց և ջանք էր անում՝ որ Յովհանի նրման բարի և կամակատար լինի:

## 44. ՑԻՄԱՐ ԱՀ ՍԱՏԱՆԻՑԸ:

Ծառային մի գիշեր սարդափն ուղարկեցին՝ որ կաթը բերի: Բայց շուտով կրկին ռանգը թռած և դողալով յետ դառաւ և ասաց: «Էնտեղ սատանայ կայ, բերանը բաց է արել՝ որ ինձ կուլ տայ»: Ո՞ւր է սատէնէն՝ հարցրեց աղէն: «Սարդափումը, սարդափումը. ջանս դողում է»:

Երեխայքը սկսեցին բարձր ծիծաղել, չունքի իրանք գիտէին՝ որ սուտ բան է. սատանայ չկայ երբէք:

«Երեխանց ասաց հայրը՝ գնացէք մէկ սրա հետ սարդափը, թո՛ղ սա ձեզ ցոյց տայ՝ թէ ի՞նչ տեղ է սատանէն: Բոլոր երեխէքն իսկոյն մոմը վառած դուս վազեցին և

գնացին սարգաւիր և ծառայն էլ վախվախելով սկսեց նրանց ետևիցը գնալ:

Սարգաւիր մտան թէ չէ՝ հարցրին՝ ի՞նչ տեղ է սատա-նէն: «Հրէն հրէն պուճախումը կանգնած է, մօտիկ արէք. տեսէ՞ք ինչպէս զարհուրելի գարշելի կերպարանք ունի և ոտիցը մինչև գլուխը սպիտակ է: Չէ՞ք տեսնում, ինչ-պէս է ատամները կրճտացնում»: Երեխայքն կրկին սկսան սաստիկ ծիծաղել նրա յիմարութեան վրայ: Մօտ գը-նացին՝ տեսան՝ որ նրա տեսած սատանէն ոչինչ չէ, եթէ ո՛չ մէկ ոչխարի բուրդն, որ մայրը մէկ մխից կախ էր տը-ւել և սպիտակ շորով ծածկել՝ որ ճանճերը վրէն չնստեն և չապականեն:

Ծառայն շատ ամօթով և կարմրատակած՝ որ էնպէս յիմար բանի հաւատացել և էնքան վախեցել էր: Բայց երեխէքն շատ շնորհակալութիւն արին իրանց հօրն ու մօրիցը և ձեռները համբուրեցին՝ որ նրանց երեխու-թիւնիցն սկսած խրատ էին տուել՝ թէ բոլորը յիմա-րութիւն է, և սատանայ ամենևին չկայ: Մարդն ինքն իրան է էզպ՛ս բան հնարում:

## 45. ԳԱԲՐԻԷԼ ԵՒ ՄԱՐԻԱՄ ՕՐԻՆԱԿՔ ԲԱՐԻ ԵՐԵԽԱՅԻՑ:

Գաբրիէլ և մարիամ էնպէս բարի երեխայ էին, էն-պէս իրար սիրում և իրանց ծնողացը հնազանդ էին՝ որ ամէն մարդ իրան որդւոցը խրատ էր տալիս, երանի թէ դուք էլ էնպէս բարի զաւակ լինիք, ինչպէս Գաբրիէլը և Մարիամը:

Էս երկու քոյր ու ախպէրը էնպէս էին սիրում իրանց ծնողացը՝ որ մէկ բանը էլ երկու անգամ չէին ասել տալիս՝ և նրանց աչքին նայելիս՝ իսկոյն իմանում էին՝ թէ ի՞նչ պէտք է անէին ու հէնց էն սհաթին անում էին։ Սրանք միտք էին անում՝ որ շատ իրաւունք է՝ իրանց ծնողացը հնազանդ լինին, նրանց սիրտը մխիթարեն և էստով իրանց ծնողաց ամսկի տակիցն փոքր ինչ դուս գան։ Ո՞րքան պարտական ենք նրանց՝ ասում էին։ Աստուծոյ յետը, նրանք են մեր կենաց պատճառը, նրանք են մեզ գառն աշխատութիւնով պահել և մեծացրել և էս հասակը հասցրել։ Հէնց հիմիկ էլ նրանք են մեզ հաց, ջուր ու շոր տալիս, մուղայիթ կենում։ Բարի խրատ են տալիս, որ լաւ և առաքինի մարդ դառնանք, և որքան կարեն՝ մեզ ուրախացնում են։ Ի՞նչքան վատ և գարշելի պէտք է ըլինք՝ եթէ մենք չարութիւնով կամ անհնազանդութեամբ նրանց սիրտը կոտրենք։ Իրար հետ էնպէս սիրով կառավարվում էին, ինչպէս երկու հրեշտակ։ Ինչ որ մէկը ճարում էր, իսկոյն վազում էր ու միւսի հետ փայ էր անում, կամ նրա բաժինը պահում։ Ուր տեղ գընում էին, ՚ի միասին էին լինում։ Ինչ որ մէկը ուզում էր, միւսը չէ՛ չէր ասում։ Էս պատճառաւ նրանց մէջումն երբէք կռիւ կամ պակաս խօսք չէր պատահում։ Եթէ մէկը մոռացմամբ մէկ բան արած էր ըլում, միւսը շուտով չէր չարանում, այլ յորդորում էր և խրատ էր տալիս քաղցրութեամբ և ասում։ «Սիրելի եղբայր իմ կամ սիրելի քոյր իմ՝ մի՛ անիր էս բանը, թէ ինձ կսիրես, էսպէս արա, ես էլ քեզ կլսեմ՝ թէ որ մի պակասութիւն արած լինիմ, և դու ինձ խրատ տաս»։

Էսպէս էլ ուրիշ երեխէքանց հետ էին սիրով վարվում, և նրանց ամէն չար բանից հեռացնում: Ամէն երեխի հետ մին չէին գալիս, այլ լաւ աշակերտների հետ էին նստում վեր կենում: Միշտ իրանց ծնողաց ասած խրատը մտքերումն ունէին:

## 46. ԼԱՒ Է ՄԵՆԱԿ ՄՆԱԼ, ՔԱՆՑ ՎԱՏԻ ՀԵՏ ՈՒՐԱԽԱՆԱԼ:

Նրանց կառավարութեան կերպը էսպէս էր: Հէնց օր լուսանում էր թէ չէ, տեղիցը ուրախ ուրախ վեր էին թռչում և էնպէս չէին անում, ինչպէ՞ս թամբալ երեխէքը՝ որ քնիցը զոռով են վերկացնում: Իսկոյն գնում էին իրանց շորերը հագնում՝ որ իրիկունը մէկ տեղ կարգին դարսած էին ըլում, գլխներները խատակ սանդրում, երեսները, ձեռները մաքուր լուանում, ատամները սրբում, բերանները ողողում: Ապա հօրնը մօր մօտ էին գընում, նրանց ձեռը համբուրում և բարի լոյս էին ասում: Յետոյ 'ի միասին կանգնում էին սեղանի առաջին և իրանց առաւօտեան աղօթքը ասում, որ վարժատանը սովորել էին: Սրանից յետոյ գնում էին իրանց մօր մօտ և իրանց առաւօտեան հացը ուտում: Սա սովորութիւն էին արել իրանց, որ հօրնը մօրիցը մի բան չխնդրեն առանց ասելու: «Սիրելի մայր, կամ սիրելի հա՞յր՝ խնդրեմ էս բանը ինձ տաս»:

Թէ որ վարժապետը էնպէս բան էր տուած լինում, որ պէտք է բերան անէին, էն միւսանգամ էլ կարդում սերտում էին, որ իմանան՝ թէ հօ գիրքը մոռացել չեն:

Ջունքի բերան անելու դասը իրիկունն էին սերտում և էնքան չէին քնում կամ ուրիշ բանի ձեռք տալիս, մինչև իրանց դասը լաւ անգիր գիտում էին, որանից յետոյ տանն էլ՝ թէ մէկ անելու բան էր ըլում, անում էին, մինչև ժամանակն հասնում էր, ապա իրանց գըրքերը կռնատակին վարժատունն էին վազում:

Վարժատանն էլ՝ հէնց բանիր՝ ամէն երեխի բարի օրինակ էին ըլում: Նրանց հագուստը ամէնի վրայ սաակ էր և կարգին: Ներս մտնելիս՝ իրանց վարժապետին քաղաքավարութեամբ գլուխ էին տալիս և պարկեշտութեամբ իրանց տեղը նստում: Երբէք բարձր չէին խօսում, կամ գոռում, կամ նհալս տեղը ընկերի հետ զըրոյց տալիս, վայրաբանութիւն անում: Դաս ասելիս՝ ուշ ու միտքը քցած՝ ականջ էին անում. չիմացած բանը հարցնում էին: Էս պատճառաւ փոքր միջոցում նրանք ամէնիցը շատ սովորեցան:

Հաց չի կերած՝ յառաջ պարկեշտութեամբ իրանց աղօթքն էին ասում, ապա էնպէս հանդարտ նստում էին, մինչև նրանց ծնողաց սիրտը ուրախութենէն ուզում էր պատռի, երբ նրանց էս բարի վարքը տեսնում էին: Իրանց գլխու (ըստ հաճոյից) ամէնևին մէկ բան ոչ վերցնում էին, ոչ ուզում: Շուտ շուտ երբէք չէին ուտում, կամ մատները լիզում, կամ արմնկի վրայ թենկը տալիս և բնաւ մէկ բան էլայ չէին անում, ինչ որ վատ երեխայքը անում են:

Միւս ժամանակները չէ՛ թէ գնում, դռներին խաղում, կամ շորերը կտրատում էին, ո՛չ. այլ տանն էին մնում, իրանց ծնողացը օգնութիւն անում և շատ ու-

րախ էին՝ որ նրանց մէկ կերպով պէտք էին գալիս: Եւ խաղըն էլ էն ժամանակն էին մտքները բերում, երբ իմանում էին՝ թէ իրանց դասը լաւ գիտեն և տանը պէտք չեն: Բացի սրանից միշտ ուրախ էին և ոչինչ ժամանակ լաց, արտասուք նրանց աչքը չէր գալիս, էնդուր որ ասած է: Լաւ բան բռնիլը ու բարի լինիլը առաւել է, քանց ոսկի և հարստութիւն: Եւ մարդի սիրտը միշտ ուրախ է ըլում, զուարթ և հանդարտ:

Երբ մեծացան՝ էլ էնքան չէին խաղում, որքան աշխատում էին: Որովհետև մարդիս պարտաւորութիւն էին համարում աշխատութիւնը շուտով սովորիլ: Գաբրիէլը ջանք էր անում՝ իր հօրիցը բան սովորի, որ մեծանալիս գլուխը պահի: Մարիամը մօրիցն էր սովորում՝ թէ ի՛նչպէս պէտք է տուն կառավարել, գուլպայ գործել, մանել, կարկտել, կարել, լուանալ, սրբել, եփել, տունը ստակ պահել: Էստոնք բոլոր սովորել էր: Նա գիտում էր՝ որ ստակութիւնը և կարգը՝ տան զարդարանքն են: Որքան պարապ ժամանակ էր ճարում, ջանք էր անում, որ տունը սրբի, ամէն բան իր տեղը դարսի: Գետինը, լուսամուտքը, աթոռքը, բոլոր փայլում էին: Խոհանոցումը ամէն բան թամուզացրած, իր տեղն էր դրած: Ով տեսնում էր, խնդում էր:

Լսեցէք այժմ՝ թէ սրանց վախճանն ի՞նչ էլաւ: Երբ Գաբրիէլը մեծացաւ, մէկ վաճառականի մօտ մտաւ, ու էնպէս հաւատարիմ, ժիր և կարգի էր՝ որ ամէն մարդ նրան սիրում էր և ընդունում: Ինքն էլ էնպէս բաւական էր իր միջումն՝ որ միշտ ուրախ էր և Աստուծուց շնորհակալ: Վերջապէս վաճառականը տեսնելով նրա ա-

րիւթիւնը, առակութիւնը և բարեսրտութիւնը, նրան իրան հոգևորդի վեր կալաւ և իր բոլոր ապրանքը նրա վրայ կտակ արեց:

Մարիամն էլ մտաւ ծառայութիւն. ու էնպէս պարկեշտ և արի էր իր գործին՝ որ նրա տէրը՝ նրան շատ տարի իր մօտ պահեց: Լաւ տան կենալով՝ սովորել էր նոյնպէս՝ թէ ի՞նչպէս պէտք է մոմ ածել, սապոն եփել, շոր ձևել, երեխայք կրթել, պահել և շատ հարկաւոր բան: Մէկ հարուստ մարդի կին փախճանեցաւ, երկու մանր երեխայ թողեց: Հիմիկ ուզում էր՝ որ էնպէս մէկ տանտիկին ունենայ՝ որ իր տանը մուղայիթ լինի և իր որբերին պահպանի: Ամէն մարդ նրան խորհուրդ տուեց՝ թէ Մարիամիցը լաւ անձն չի կարող ճարել: Նա էլ նրան առաւ և տեսաւ՝ որ յիրաւի իր տան համար լաւ տանտիկին և իր երեխայից համար լաւ մէր՝ էլ չէր կարող ճարել: Աստուած նրան էլ երեխայք բաշխեց, բայց նա իր երեխայքը միւսներիցը չէր ջոկում: Բոլորին էլ հաւասար էր սիրում և մեծացնում: Էսոր համար Աստուած նրան էնքան բախտաւոր արեց՝ որ բոլոր իր որդիքը շատ բարի և երախտագէտ էին:

Պէտք է պատմեմ էլ՝ որ նրանց հայրը՝ երբ նրանց հարսանիք արին, շուտով մեռաւ: Բայց որովհետև մէրներն էլ պառաւել և շատ ջանից ընկել էր, էս մասին աղջիկը էնքան աղաչեց՝ որ նրան իր մօտ տարաւ, որ ծերութեանը նրան պահի: Գաբրիէլն էլ էր ուզում՝ որ մօրը իր մօտ տանի, բայց մայրը աղջկայ մօտ գնաց: Այնուամենայնիւ Գաբրիէլը գալիս էր ամէն օր իր մօր տեսութիւնը: Էնպէս խորին ծերութիւնը հասած՝ մեռաւ:

Հիւանդ տեղը գիշեր ցերեկ իր որդւոցը օրհնում էր և կեանք խնդրում: Նրա վերջին խօսքն էլ էս էր: Բարի զաւակքը են կեանքումը իրանց ծնողացը կրկին կգտնին, կտեսնին և յաւիտեան նրանց մօտ կըլին:

## 47· ՀԱՅՐՆ ԵՒ ՈՐԴԻՆ:

Զրոյց 'ի վերայ աղօթից

ՈՐԴԻՆ

Ընչի՞ համար ես՝ սիրելի Հայր իմ՝ ամէն օր դու հացի վրայ, կամ եկեղեցումը աղօթք անում, բայց մենք ո՛չ:

ՀԱՅՐՆ:

Էն պատճառաւ՝ որ քո հասակի երեխայքը դեռ չեն գիտում՝ թէ ի՞նչպէս պէտք է աղօթք անել:

· ՈՐԴԻՆ

Ընչի՛ չեմ գիտում: Ես էլ կարող եմ ձեռներս բարձրացնել, ծունր դնել, երեսիս խաչ հանել և մէկ աղօթք շուտով բերան անել և ասել:

ՀԱՅՐՆ:

Էդ աղօթք անել չէ՝ սիրելի որդեակ իմ:

ՈՐԴԻՆ

Ի՞նչ է ուրեմն աղօթք անելը: Ասա ինձ աղաչեմ. ես շատ սրտով կուզէի իմանալ դրա զօրութիւնը:

ՀԱՅՐՆ:

Աղօթք անել՝ կնշանակի՝ Աստուծոյ հետ խօսել: Աստուծուն շնորհակալութիւն և փառաբանութիւն տալ նրա անհուն ողորմութեան և գթութեան համար՝ որ մեզ միշտ անում է, որ մեզ փորձանքից ազատ է պահում, մեզ վրայ քաղցր աչք ունի հանապազ: Նրան խոստանալ.

հնազանդ լինել, Նրա կամքը կատարել: Նրանից խընդրել՝ որ իր հայրական գութը մեզանից անպակաս անի: Դու էստոնք բոլորը դեռ չես կարող անել. ուրեմն աղօթք անել էլ դու դեռ չես կարող:

ՈՐԴԻՆ

Ինձ էնպէս է երեւում, համարեա թէ՝ ես էստոնք բոլորը կարող եմ անել: Զորօրինակ եթէ ասեմ, ո՜վ ամենաբարի Աստուած իմ՝ գոհ եմ քեզանից՝ որ դու ինձ այսօր կերակրեցիր, կշտացրիր, ինձ ապրուստ տվիր, էնպէս արա՝ որ ես էս բարութիւնը ամէն օր վայելեմ: Միթէ էս աղօթք չէ՞:

ՀԱՅՐՆ:

Այո՛, աղօթք է: Եթէ դրանով կամենաս ասել: Ո՛վ Աստուած իմ, Դու ես՝ որ ինձ առողջութիւն և ախորժակ տվիր: Էս շնորհքը ինձանից պակաս չէ՛ առնես:

ՈՐԴԻՆ

Իմ միտքն էլ այդ էր, բայց ես խօսքով դեռ չեմ կարում ասել:

ՀԱՅՐՆ:

Խօսքով ասել ամենեւին չէ՛ հարկաւոր: Սրտով պէտք է զգալ, ինչ որ Աստուծոյ կամենում ենք ասել: Իսկապէս հաւատալ՝ թէ մեր առողջութիւնը, մեր ամէն բաղդաւորութիւնը նրանից է գալիս և թէ մենք նրան շատ շնորհակալութիւն և գոհութիւն պարտական ենք միշտ: Էնպէս եթէ մտածես՝ հէնց մէկ բան կպակասի քո աղօթքիցը:

ՈՐԴԻՆ

Ի՞նչ բան՝ սիրելի Հայր իմ․ ասա ինձ․ ես շատ սրտով ուզումեմ՝ որ ես էլ Աստուծոյ աղօթք անեմ:

ՀԱՅՐՆ

Էս է՝ որ դու քո աղօթքումը ոչինչ չի խոստացար: Ասելով՝ թէ քո առողջութիւնը նրանից է գալիս, դու չասեցիր՝ թէ քո առողջութիւնը ի՞նչ բանի պիտի պէտք է ածես․ որովհետև ով որ մեզ մէկ պարգև տալիս է, անտարակոյս կամենում է, որ մենք նրա պարգևը մէկ բանի պէտքն ածենք:

ՈՐԴԻՆ

Էլ չեմ մոռանալ՝ որ աղօթք անելիս ասեմ. ով բարի Արարիչ իմ, գոհ եմ քո անթիւ մարդասիրութիւնիցը և մանաւանդ քո ողորմութիւնիցը՝ որ ինձ առողջ ես պահում: ինձ բարի հոգի և միտք բաշխիր՝ որ ես իմ կեանքը միշտ բարեգործութեամբ անցուցանեմ, ամենայն մարդոյ պիտանի լինիմ, իմ սիրտս և հոգիս քեզ եմ ընծայում, ինչպէս կամենաս, էնպէս պահիր:—

## 48 ՀԱՅՐՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՆ

Զրոյց 'ի վերայ ժամագնացութեան

ԵՐԵԽԱՅՆ

Հայր իմ․ սիրելի հայր իմ․ ասա ինձ՝ աղաչեմ. էս որ մարդիկ եկեղեցին են գնում, ծունր դնում, ի՞նչ է նրանց միտքը:

ՀԱՅՐՆ

Որդեակ իմ․ քեզ որ ես կամ մայրդ մէկ բան ենք

բաշխում, կամ շոր ենք անում․ ի՞նչ ես մտածում․ ուրախանո՞ւմ ես՝ թէ ո՛չ ։ Չե՞ս ասում քո միջումդ՝ թէ էս ի՞նչ բարի ծնողք ունիմ, որ ինձ էսքան լաւութիւն են անում ։ Քեզ որ մէկ ուրիշ մարդ ասի․ ի՞նչ ես քո ծնողաց մօտ կենում․ արի ինձ մօտ․ ես քեզ լաւ կը պահեմ․ կերթա՞ս ։

ԵՐԵԽԱՅՆ

Աստուած ո՛չ անի ։ Ձեզ տեսնելիս՝ էնպէս եմ իմանում․ թէ աշխարքս իմն է ։ Միտս ուզում է՝ որ ես իմ ջանը ձեզ մատաղ անեմ ։ Ուրեմն ուրիշի մօտ ի՞նչպէս կերթամ ։

ՀԱՅՐՆ

Ընչի՞ ես էդպէս մտածում ։ Ընչի՞ համար ուրիշ մարդի էլ՝ էդպէս չես սիրում, Միթէ նրանց Աստուած չի՞ ստեղծել ։ Նրանից շատ մեծ մարդիկ էլ կան աշխարքումս, շատ լաւն էլ ։

ԵՐԵԽԱՅՆ

Ա՜խ՝ ի՞նչ էք ասում ։ Դուք որ չլինիք․ ինձ ո՞վ կը պահի ։ Ինձ ո՞վ հաց, կերակուր, կամ ապրուստ կտայ ։ Դուք որ մէկ օր ինձանից ձեռք վերցնէք․ ես պէտք է սովու մեռանիմ, որբ մնամ ։ Ուրեմն ձեզ ի՞նչպէս չըսիրեմ ։ Ուրիշն ինձ ի՞նչ է անում ։ Իմ ամենայն կարիքը, ամենայն ցաւը և հոգսը դուք էք քաշում ։ Էդպէս բան էլ չասես․ խնդրեմ յատուկ ։

ՀԱՅՐՆ

Շա՛տ ապրիս ։ Սի՛րելի որդեակ իմ ։ Աստուած տայ՝ որ էդպէս բարի սրտով մեծանաս ։ Ես էլ գիտեմ՝ որ դու-

մեզ շատ ես սիրում, բայց ես էն կուզէի ասել՝ թէ դու ընչի՞ ես էդպէս մեզ սիրում։

ԵՐԵԽԱՅՆ

Ա՞խր էլ ո՞ւմ սիրեմ՝ որ ձեզ չսիրեմ։ Դուք էք ինձ պահում և մեծացնում, դուք էք ինձ էս օրը հասցրել։

ՀԱՅՐՆ

Դու ուրեմն մեր լաւութեան համար ես մեզ սիրում. բայց մէկ մտածիր՝ թէ ես կարո՞ղ եմ քեզ համար արեգակն էլ ստեղծել, քեզ լո՞յս տալ. էսքան կենդանի, ծառ, պտուղ՝ որ մենք տեսնում ենք՝ քեզ համար գոյացնի՞լ. Ո՛չ. սի՛րելի, գա՛ւ լիցի. ես ո՞վ եմ՝ որ էստոնք անեմ։

Տեսնո՞ւմ ես՝ ի՞նչպէս գեղեցիկ է արեգակի լոյսը։ Ի՞նչքան քաղցր են ծառոց պտուղքը։ Ո՞րքան անուշահոտ են ծաղիկք և բոյսք։ Բոլոր մեզ համար է։ Մենք ենք վայելում. բաս սրանց պարգևողին չի՞ պէտք է սիրենք. չի՞ պէտք է շնորհակալութիւն անենք.

ԵՐԵԽԱՅՆ

Յայտնի բան է, էդ ի՛նչքան վատ մարդ պէտք է ըլի, որ էդպէս փիս սիրտ ունենայ։

ՀԱՅՐՆ

Ես էլ էդպէս եմ կարծում, Մարդիկ էլ էդպէս են մտածում, Սրանց բոլորի Ստեղծողն և պարգևողն Աստուած է, մեր ամենաբարեգութ Հայրը. Մենք նրան էս աշխարքումը չենք կարող տեսնիլ. բայց ինչ որ ունինք, նրա շնորհքն է. հաց, կերակուր, կեանք, բախտաւորութիւն՝ բոլորն նա է մեզ տալիս։ Իմ և քո մօր պահօղն էլ նա է։ Նա որ մեզ վրայ քաղցր աչքով չը-

նայի, հէնց էն րոպէին կոչնչանանք, էլ ո՛չ հայր կունենաս, ո՛չ մայր, կմնաս որբ, ողորմելի, ուրիշի ձեռին կարօտ:

ԵՐԵԽԱՅՆ

Ա՞խր հա՛յր իմ էդ ի՞նչ ես ասում: Ես կերթամ Աստուծոյ ոտքը կընկնիմ. երեսս գետինը կքսեմ, կաղաչեմ՝ որ նա ձեր կեանքը երկար անի: Որ նա ձեզ վրայ քաղցր աչք ունենայ: Մայրս որ հիւանդացել էր, ուզում էի՝ թէ ջուրն ընկնիմ դարդու:

ՀԱՅՐՆ

Տե՛ս՝ որդեակ իմ. ամէն մարդ էլ էդպէս է մտածում: Տեսնելով՝ թէ Աստուած էսքան շնորհք, ողորմութիւն ունի մեզ վրայ, մենք գնում ենք եկեղեցին՝ որ Աստուածանից շնորհակալ լինինք: Աստուծոյ խնդրենք՝ որ նըրա շնորհքը մեզանից անպակաս լինի: Նա մեր սիրտը մաքուր պահի: Ծունր դնելովը կամենում ենք ցոյց տալ՝ թէ մենք նրա ոտի հողն ենք, նրա ծառայն ենք: Ինչ որ նրա կամքն է, էն պէտք է կատարենք: Նրա ոտքըն ենք ընկնում, որ մեր պակասութեան խաթեր՝ մեզ վրայ չբարկանայ. մեզ ներողութիւն անի: Եւ որովհետև շատ մարդիկ կարդալ չեն գիտում, էնդուր համար քահանայքը, սարկաւագները և բոլոր եկեղեցականքը նըրանց բերնիցը Աստուծուն փառաբանութիւն են տալիս: Բայց լաւ կըլէր, որ մենք ամէնս էլ հասկանայինք ինչ որ նրանք ասում են: Էն ժամանակը մեր սիրտը աւելի ջերմ կլինէր:

ՈՐԴԻՆ

Ա՛խ՝ հայր իմ՝ եթէ այդպէս է՝ բաս ընչի՞ համար

բաղի մարդ եկեղեցումը ծիծաղում է․ ոմանք խօսում են։ Ոմանք քնում են, կամ դէս ու դէն են նայում։ Միթէ նրանք միտք չե՞ն անում՝ թէ էնդուր համար են եկել՝ որ շնորհակալութիւն անեն աստուծոյ։ Ես որ քեզ մէկ խօսք եմ ուզում ասել, երբէք չեմ ուզում, որ էլ մէկ ուրիշ բանի աչք ածեմ։ Ուրեմն նրանք ի՞նչպէս կարող են համ ծիծաղել, համ իրանց միտքը ժողովել դէպի առ Աստուած։

ՀԱՅՐՆ

Ա՜խ՝ սիրելի՛ էդ ճշմարիտ է։ Բայց նրանց ասօղ չի՛ էլել։ Երեխայութիւնից տեսել են՝ որ իրանց հէրն ու մէրը ժամ են գնացել, իրանք էլ հետները գնացել են։ Չե՞ս տեսնում մեր եկեղեցիներումը՝ թէ երեխայքը սեղանի առաջին ի՞նչքան չարութիւն են անում, ի՞նչպէս են ծիծաղում, խօսում, իրար բոթում, խփում։ Ա՜խ՝ որդեակ իմ․ Աստուած բարի է․ էնդուր համար նրանց մեղքը չի՛ հարցնում․ եթէ ո՛չ՝ թէ ձեր վարժապետի մօտ էնպէս չարութիւն անէք, ի՞նչ կանի։ Իսկոյն չի՞ պատժել ձեզ․ էսպէս էլ էնպէս մարդիկ սովորել են, ժամ են գնում, բայց թէ ընչի՞ համար, շատ քիչը կան՝ որ մտածում են։

ԵՐԵԽԱՅՆ

Աստուած մի՛ արասցէ․ թէ ես էդ տեսակ բան անեմ։ Եկեղեցին որ երթամ, միշտ էն կմտածեմ և կը խնդրեմ, որ Աստուած ինձ շնորհք և բարի սիրտ տայ, և ձեզ կեանք և բախտաւորութիւն, որ ինձ պահէք և մեծացնէք։

ՀԱՅՐՆ

Ինչպէս սիրտ որ ունենաս՝ սիրելի որդեակ իմ, ամէն ժամանակ բախտաւոր կլինիս և Աստուծոյ աչքն քեզ և մեզ վրայ միշտ քաղցր կլինի ։ Ջանք արա՝ որ խօսքիդ հաստատ մնաս ։—

## 49 Ո՞ՒՐ ՄԵԾԱԶՕՐ ՀԱՅՐԵՆԻՔ ՄԵՐ

Զրոյց 'իվերայ Հայրենեաց ։

Յովհաննէսը ուշիմ և փափկասիրտ երեխայ գոլով տեսաւ մէկ օր՝ որ մէկ Պարսիկ մէկ խեղճ Հայի շատ չարչարում, ծեծում և անարգում էր, և ո՛չ ոք նրան օգնութիւն չէր հասնում ։

Բարեմիտ երեխայի սիրտը տոչորվեցաւ ։ Լալով և կըսկըծալով եկաւ տուն ։ Ծնողքը տեսնելով նրա արտասուքը, ինչպէս էին կարծում, թէ նրա մէկ տեղը ցաւում է, բայց ո՛րքան զարմացան, երբ իմացան՝ թէ նա ո՛չինչ ցաւ չունի ։—

ՀԱՅՐՆ

Բաս ի՞նչ է քո դարդը՝ սիրելի որդեակ իմ. վասն էր չե՛ս մեզ պատմում, որ իմանանք ։

ՅՈՎՀԱՆՆԷՍԸ

Հա՛յր իմ ։ Ա՛խ ի՛նչ անեմ ։ Թէ իմանամ, մէկ ճար կանես, կասեմ ։ Այսօր ինչպէս մէկ բան տեսայ՝ որ քանի միտքս է ընկնում, հոգիս այրվում խորովվում է ։ Զըգիտեմ՝ Աստուած ամենաբարին հէնց մեր ազգի վրայ է բարկացել, որ էսքան տանջվում և չարչարվում ենք ։ Թէ գերի է գնում, մեր ազգիցն է գնում ։ Թէ խարջ կամ կուռ է հարկաւոր, մեր ազգիցն են պահանջում ։ Էլի

ով սուտ՝ մեզ է թուք և նախատինք տալիս։ Չգիտեմ, մենք ի՞նչ ենք արել՝ որ Աստուած էսպէս մեզանից ձեռն է վեր առել։ Ուրիշ ազգեր թագաւոր ունին, զօրք ունին, աշխարհք են առնում, անուն ունին․ բայց մեր ազգը էսպէս ցրուած, խեղճ, ողորմելի մնացել է։ Աշխատում էլ է, գիշեր ցերեկ կեանքը փչացնում էլ է․ բայց այնու ամենայնիւ ոչ ոք մեզ տէրութիւն չէ՛ անում։

Ախր ի՞նչ է սրա պատճառը՝ սի՛րելի Հայր իմ։ Էս օր մէկ Հայի տեսայ՝ որ չարչարում էին, աչքիս լոյսը խաւարեցաւ։ Ուզում էի՝ որ հոգիս տամ։ Ասա՛ ինձ, մի՞թէ մենք վաղ թագաւորութիւն չե՞նք ունեցել․ ըն-չե՞նք էսպէս խեղճ մնացել։

ՀԱՅՐՆ

Ա՜խ՝ սի՛րելի որդեակ իմ․ եթէ դու էդ երեխայ տեղովդ էդպէս բաներ մտածում ես, ապա տեսնես՝ թէ իմ սրտումս ի՞նչ է անց կենում։ Երանի՛ քեզ՝ որ երեխայ ես և դեռ ոչինչ չես հասկանում։ Դու դեռ ի՞նչ ես տեսել։ Քար չկայ մեր երկրումը՝ որ մեր ազգի արիւնովը լուացած չըլի։ Հէնց էս տեղումը, ուր որ բընակում ենք այժմ, տեսնիս՝ որքան Հայի անմեղ արիւն թափել է։ Քա՞նի քանի հոյակապ քաղաքք, երևելի աթոռանիստք, ուր մեր թագաւորքը առիւծի պէս իշխում էին, այժմ աւերել, հողի հետ հաւասարել են։ Իմ հին ցաւերը կրկին նորոգեցիր՝ որդեակ․ ո՞ւր է մեր հզօր թագաւորութիւնը, ո՞ւր մեր երևելի իշխանքը․ Իրանք վերջացան և մեզ որբ և ողորմելի թողին աշխարհիս վրայ։ Երանի՛ թէ նրանց անունն էլայ չէինք իմացել,

որ էսքան կծկւծ չըլինէր յետոյ ։ Բայց այժմ գոհութիւն ամենաբարեգութ Արարչին՝ որ մեր դառն վիճակը տեսաւ և մեզ էսպէս հզօր և ողորմած Տէրութեան տակը բերեց՝ որոյ նմանն աշխարհ.քս դեռ չէ՛ տեսել ։

Բայց՝ սի՛րելի՝ մեղաւորը մեր ազգը չէ՛ որ էսպէս ողորմելի ենք մնացել ։ Մեզանից առաջ զօրեղ ազգեր շատ են փչացել, գնացել ։ Բայց էլի էս օր էլ մեր ազգի շունչը կայ ։ Քանի՜ քանի մեծամեծ թագաւորութիւնք են կործանվել. քանի՜ քանի ազգեր են աշխարքիս երեսիցը իսպառ ջնջվել, բայց մեր ազգը՝ թէև ամէն ինչ կորցրեց, բայց էլի իր անունը, իր սուրբ հաւատը, իր եկեղեցին, իր լեզուն մինչև էս օր անխախտ պահել է, և դեռ աշխարքի վրայ երևում է, և անուն ունի ։ Կուզե՞ս իմանալ՝ թէ մեր թագաւորութիւնը ընչի՞ վերջացաւ, ական՜ջ արա, քեզ կը պատմեմ և մօտումդ պահիր ։

ՅՈՎՀԱՆՆԷՍԸ

Ա՛խ՝ Հա՛յր իմ սիրելի՝ խնդրեմ, որ գլխիցն ասես ։ Առաջ պատմի՛ր՝ թէ ո՞վ էին մեր երևելի թագաւորքը, ապա միւս բաներն ասա՛, որ գոնէ սիրտս փոքր ինչ հանգստանայ ։

ՀԱՅՐՆ

«Աստուած քեզ միշտ էդպէս բարի սիրտ և հոգի տայ՝ սի՛րելի որդեակ իմ, որ ազգի ցաւը միշտ իմանաս և ձեռքիցդ եկածին պէս՝ օգնութիւն անես ։ Ասենք՝ թէ մեր թագաւորութիւնը վերջացաւ, մէկմէկու օգնել և իրար ցաւ քաշել հօ կարող ենք ։ Քո խնդիրքը կկատարեմ, բայց պէտք է՝ որ լաւ ուշ ու միտքդ հաւաքես և ասածս իմանաս ։

## 50․ ՄԱՍԻՍ ԵՒ ԴՐԱԽՏՆ
## ԱՐՁԱՆՔ ՀՆՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Տեսնո՞ւմ ես՝ աչքի լոյս՝ էս Մասսայ սարը։ Սրա գլխին էր՝ որ Նոյեան տապանը նստեց և մարդիկ ջրհեղեղից յետ՝ կրկին բազմացան։ Աստուած որ Ադամայ ստեղծեց, ո՞ւր դրեց։ Եղեմական դրախտը։ Ի՞նչ տեղ է այժմ էն Դրախտը։ Մեր երկրումը։ Էս ասելով՝ կամիմ քեզ իմացնել, որ դեռ բոլոր աշխարհ անմարդի էր, անապատ, ամայի, ինչ ժամանակ մեր աշխարհքումը բնակութիւն կար։ Մասիս և Դրախտն կենդանի արձանք և վկայք են՝ որ մեր աշխարհը ամենից հին, երևելի և անուանի է։

## 51 ՄԻԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱՅ ՆԱՀԱՊԵՏԻՆ ՄԵՐՈՅ

Աստ էր՝ որ մեր քաջայաղթ նախահայրը Հայկ՝ իր որդովք և ընտանեօքը եկաւ, բնակեցաւ։ Նեբրովթ Թագաւորն Բաբելացւոց եկաւ՝ որ նրան ոչնչացնի, բայց հզօրաբազուկն Հայկ սպանեց նրան և սկսեց միահեծան իշխող լինիլ մեր երկրի վրայ։ Էստուր համար մեր անունը Հայք է մնացել, և մեր աշխարհը Հայաստան է ասվում։ Հայկ շատ ազգերի յաղթեց և իր ձեռի տակը բերեց, շատ քաջութիւնք արեց և մեր աշխարհը պայծառացրեց։

Հայկայ որդիքը և թոռունքը սոքա էին։ Արմենակ, Արամայիս, Ամասիայ, Թորգոմ, Գեղամ. Հարմայ. Արամ, Արայ, Կարդոս և Անուշաւան։ Սոցայ միջի երևելիքն են Արամ և Արայ։ Առաջինն շատ մեծամեծ յաղթու-

թիւնք արեց, մեր երկիրը մեծացրեց։ Եսգուր համար ուրիշ ազգերը մեզ Արմէն են ասում և ոչ Հայք։

## 52 ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ (888)

Երբ Հայկայ սերունդը վերջացաւ, շատ իշխանք ըսկսեցին մեր ազգին տիրել։ Սրանց միջի երևելին էր Զարմայր նահապետն մեր՝ որ Տրոյեայ քաղաքի աւերման ժամանակը մեծամեծ քաջութիւններ արեց։ Յետոյ Պարոյր իշխանն մեր ուրիշ իշխանաց հետ միաբանելով Սարդանապաղ թագաւորին սպանեց, մեր աշխարհը Ասորոց ձեռիցը ազատեց և 'ի 888 ամին նախ քան զծնունդն Քրիստոսի Հայոց թագաւոր դարձաւ։

Պարոյրից յետոյ եկած թագաւորների միջին երևելին էր Տիգրան Ա. այր հզօր և անպարտելի՝ որ Պարսից Կիւրոս թագաւորի հետ միաբանեցաւ. անթիւ քաջութիւններ գործեց և մեր երկիրը մեծացրեց։ Վահագն այնքան հզօր էր և քաջ՝ մինչև Աստուծոյ տեղ պաշտեցին և արձան կանգնացրին նրան։

Բայց ո՞վ հենց էն է Հայաստան գլուխ էր բարձրացրել՝ որ իր բոլոր սահմանակից ազգերը իր ձեռի տակը բերի, յանկարծ ինչպէս մէկ թագաւոր դուս եկաւ՝ որ աշխարհ ամենայն սասանացրեց։ Էս թագաւորը՝ մեծըն Աղէքսանդր Մակեդոնացին էր, որ բոլոր փոքր Ասիու և Եգիպտոսի տիրելէն ետև՝ անթիւ զօրք եկաւ, որ Պարսկաստան առնի։

Վահէ թագաւորն մեր կամելով Պարսից թագաւորին՝ որոյ անունն Դարեհ կոդոման էր, օգնութիւն անել, ինքն մեռաւ. և մեր աշխարհը թողեց թշնամու

ձեռքը: Էս պատահեցաւ 328 Թուին նախ քան զՔրիստոս՝ որ մեր թագաւորութիւնը առաջին անգամ վերջացաւ :

## 53 ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ (149)

Բայց ամենաբարի Նախախնամութիւնն Աստուծոյ մեզ որբ չթողեց : Աղեքսանդր յանկարծ մեռաւ : Նրա զօրապետքը տէրութիւնը բաժանեցին և յետ փոքր ժամանակի սկսաւ քաջազօր տոհմն Արշակունեաց տիրել Պարսից և Հայոց : Արշակ մեծ իր Վաղարշակ եղբօրը Հայոց վրայ Թագաւոր կարգեց : Վաղարշակայ երախտիքը և բարերարութիւնքը անթիւ են մեր ազգի վրայ : Սա մեր աշխարհը բարեկարգութիւն քցեց : Երկոտասան նախարարութիւն (մինխարութիւն) բաժանեց և մեր ազգի պատմութիւնը Մարիբաս Ասորւոյն գրել հրամայեց 'ի 149 ամի նախ քան զծնունդն Քրիստոսի :

Սրանից յետոյ մեծամեծ Թագաւորներ շատ ունենինք, որոց երևելիքն են Արտաշէս Ա. որ Պարսից երիցութիւնը ստացաւ. Տիգրան Բ. որ շատ տարի Հռովմայեցւոց հետ պատերազմեցաւ, Ասորեստանին տիրեց. Աբգար՝ որ ամենից առաջ քրիստոնէական հաւատը և Քրիստոսի անձեռագործ պատկերը ընկալաւ : Անանէ և Սանատրուկ կրկին ուրացան զՔրիստոս : Վաղարշ Վաղարշապատ քաղաքը շինեց (194), ուր որ այժմ Էջմիածինն է : Խոսրով Պարսից հոգեհան էր արել, բայց Անակ հայրն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ եկաւ, և նրան դաւաճանութեամբ սպանեց :

Որդին Խոսրովայ էր անպարտելին և հսկայաղօրն Տրդատ : Սա Հռովմ էր իր ուսումն առել և իր քաջու-

թեամբ աշխարհ ամենայն զարմացրել: Սրա ժամանակին Լուսաւորիչ Հայրն մեր՝ որդին Անակայ էկաւ մեր աշխարհը և քրիստոնէական հաւատը քարոզեց (286): Տիրան Բ. Արշակ Բ. Պապ, Վարազդատ չէին այնքան անուանի:

Բարերարն և մեծագործն քան զամենայն թագաւորըս մեր՝ էր վեհամիտն Վռամշապուհ, անմահն յազգէ յազգս: Սա սկսեց մեր երկրումը վարժարաններ բանալ, երիտասարդ անձինք Յունաստան և Եգիպտոս ուղարկել, գրեանք թարգմանել և շարադրել տալ: Միով բանիւ՝ մեր աշխահի և լեզուի լուսաւորութեան պատճառը սա էր, որոյ անունն սուրբ պէտք է համարի ամենայն Հայազգի: Սուրբն Մեսրովբ մեր գրերը գտաւ: Աստուածաշունչը թարգմանեցին: Մովսէս Խորենացին մեր պատմութիւնը գրեց:

Ի՞նչ ասեմ. սիրելի՝ թէ սրա արածը էսպէս շարունակվէր, մեր աշխարհը լուսաւորութեան և գիտութեան տուն կդառնար: Բայց ա՜խ, յետնորդք սորա Խոսրով Բ. և Արտաշիր չէին այնքան բախտաւոր: Պարսիկք և Հռովմայեցիք ինչպէս ահեղ գազանք երկու կողմից մեր աշխարհը կամենում էին իրանց ձեռի տակը բերել: Էս պատճառաւ Վռամ թագաւորն Պարսից՝ մեր Արտաշիր թագաւորին գերի արեց, սպանեց և էսպէս դառն կերպով երկրորդ անգամ Արշակունեանց թագաւորութիւնն էլ վերջացաւ 422 ամի զկնի Ծննդեան Քրիստոսի. և այսպէս միւսանգամ մնաց մեր ողորմելի հայրենիքը անտէր և թշնամահար:

## 54 ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԶՊԱՆԻՑ

### ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Սգալի էր յիրաւի էս ժամանակին մեր աշխարհի վիճակը։ Անողորմ Պարսիկք երկար գերելուց և աւերելուց յետոյ՝ սկսան սաստիկ հրաման և զօրք ուղարկել մեր երկիրը՝ որ բոլոր եկեղեցիքը քանդեն, Քրիստոսի հաւատը վերջացնեն և մեր ազգը կրակապաշտ շինեն։ Էս դառն ժամանակին էր՝ որ Աստուած մեզ էնպէս մէկ իշխան պարգևեց, որոյ օրինակը՝ համարեա թէ՝ ոչ մէկ ազգ էլայ չունի։ Վարդան Մամիկոնեան փրկիչ դարձաւ Հայաստանի։ Այնպէս էր նա վառեալ քրիստոնէական հաւատով և հայրենասիրութեամբ, մինչև շատ անգամ փոքր զօրօք՝ Պարսից անթիւ զօրացը յաղթեց, մեր աշխարհը ազատեց, իր կեանքը զոհ տվեց, և թէև ինքը ևս նահատակեցաւ (432), բայց յաջորդք նորա վահան, Վարդան Մամիկոնեանք, Սմբատ, Դաւիթ Սահառունի և այլք բազումք նրա հոգին ունելով՝ միշտ մեր ազգը և աշխարհը քաջութեամբ պահպանեցին։

## 55 ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ (885)

Մինչև Աշոտ Բագրատունի (885) օծաւ թագաւոր Հայոց և Հայաստան կրկին հոգի առաւ։ Յաջորդք սորա Սմբատ Ա․ Գագիկ Արծրունի, Աշոտ Երկաթ, Սմբատ Բ․ և այլք էին թագաւորք հզօր և իմաստունք։ Բայց անիրաւ Յոյնք, Արաբացիք և Պարսիկք ամէն կողմանէ պաշարեալ ունելով մեր աշխարհը՝ միւսանգամ սկսան այնքան ճնշել, մինչև Բագրատունեաց թագաւորութիւ-

նըն էլ վեջացաւ (1042) և Գագիկ Բ․ վերջին Թագաւորն մեր վտարանդի և Թափառական մեռաւ ՚ի Յունաստան ։

## 56 ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԻՆԵԱՆՑ (1198)

Տեսնելով Թէ մեր աշխարհքը էսպէս ոտնակոխ և Թշնամահար էլաւ՝ Ռուբէն Ա․ ազգական Գագկայ՝ ըսկըսաւ Միջերկրական ծովի ափումն Տարոս և Կիւլիկէ իր ձեռի տակը բերել և անդ իշխանութիւն անել ։

Յաջորդք նորա կոստանդին Ա․ Թորոս Ա․ Լևոն Ա․ Թորոս Բ․ Թովմաս․ Ռուբէն Բ․ բազում քաջութեամբ և իմաստութեամբ կառավարվեցան, նրանց տէրութիւնը ընդարձակեցին և խաչակիր զօրացը մեծ օգնութիւն հասցրին, մինչև Լևոն մեծ Բ․ եղբայր Ռուբէնի օծաւ Թագաւոր Հայոց ։

Ո՛չ սակաւ քաջ էին և յաջորդք սորա Հեթում, Լևոն Գ․ Լևոն Դ․ Լևոն Ե․ և այլք ։ Ապա Լևոն Զ․ որոյ հայրն Լատին էր և մայրն Հայ՝ շատ Թշնամի ունելով և ոչինչ օգնութիւն չգտնելով, գերի վարեցաւ սա յԱմիրապետէն Արաբացւոց․ ապա գնաց Հռովմ Սպանիա՝ որ մեր աշխարհին մէկ ճար անի, բայց ոչինչ հընարք չգտաւ և ինքն էլ 1392 Թուին Փարէժ մայրաքաղաքումը մեռաւ, որոյ գերեզմանն մինչև ցայսօր անդ է ։ Այսպէս վերջացաւ և Թագաւորութիւնն Ռուբէնեանց, Զկնի որոյ Հայաստան էլ՝ ուրախութեան օր չըտեսաւ ։

Էսպէս չորեքս Հայոց Թագաւորութիւնը հաստատվեցաւ և չորեքս կրկին վերջացաւ ։ Էս ժամանակից ըս-

կըսած՝ մնացինք գլխովին անտէր և գերի Օսմանցւոց և Պարսից ։ Համարեա՛ թէ այժմ 447 տարի է, որ էսպէս անիրաւ Մահմեդականաց ձեռին գերի մնացինք ։ Հաւատացէ՛ք ինձ՝ որդեակ իմ. ինչ ազգ որ լինէր, օրինակը շատ կայ, էսքան ժամանակ էսպէս բարբարոս ազգաց ձեռի տակին, հաւատն էլ կուրանար, լեզուն էլ կկորցնէր և իր ազգութիւնն էլ իսպառ կոչնչանար ։ Մեր ազգի հաստատուն բարքը, համբերութիւնը, մեծահոգութիւնը, ջերմեռանդ սիրտն էր՝ որ էսքան խղճահարութեանը չորս հարիւր տարի դիմացաւ ։

Մեր թագաւորութեան վերջանալու պատճառը՝ գիտէ Աստուած՝ մեր ազգը չէր, այլ մեր երկրի դրութիւնը ։ Մեր ազգը 'ի բնէ անտի աշխատասէր գոլով, հանդարտ, խաղաղասէր՝ յայտնի բան է՝ որ զանազան արուեստով պարապելով՝ միշտ հարստանում էր և պայծառանում ։ Ուրիշ ազգերը՝ ինչպէս Պարսիկը, Տաճիկը՝ սովըռ, վայրենի գոլով՝ միշտ ուզում էին՝ որ մեր ազգի դատած ապրանքը և հարստութիւնը յափշտակեն ։ Էս օր էլ ենք տեսնում՝ որ միշտ Կաւկազեան վայրենի ազգերը՝ Լեզգին, Չէրքէզը գողի պէս աչքները քցած ունին, որ մեր էլած չէլածը կողոպտեն, ու մեզ էլ ոչընչացնեն. ի՞նչ տեղ հանէր Հոնաց, Չինկիզխանի, Թամուրլանգի և Մահմեդականաց ոտքը, որ էլ չէն մնար ։ Քանի՞ քանի թագաւորութիւնք ինչպէս ջրհեղեղ քանդեցին, ջնջեցին էս գազանաբարոյ աշխարհակալքը ։

Բայց յայսմանէ՝ մեր ազգը քրիստոնեայ և մեր թըշնամիքը, որը հեթանոս, որը Մահմետական. ի՞նչ կարող էր էնպէս արեանարբու ազգերի միջին մնալ բախտաւոր.

Շատ մարդիկ էնպէս են կարծում՝ թէ մեր ազգի ան-
միաբանութիւնն է մեր թագաւորութեան վերջանալու
պատճառը ։ Քա՛ւ լիցի ։ Էնպէս ասողքը ուրիշ ազգաց
պատմութեանը ամենևին տեղեակ չեն և ընդվայր տե-
ղը մեր ազգին մեղադրում են ։ Է՞ն հոգին, է՞ն ջերմե-
ռանդ հաւատը, էն ազգասիրութիւնը՝ որ մեր ազգն ու-
նի, հաւատա՛ ինձ, ո՛րդեակ իմ, քիչ ազգեր ունին ։

Նայիր սիրելի՝ էս օր էլ մեր ազգը երբէք աւազա-
կութեամբ, սպանութեամբ, կողոպտելով չի՛ պարապում ։
Երկրագործութիւնը, արհեստը, վաճառականութիւնը,
աշխատասիրութիւնը և ուսումն՝ նրա հոգին են ։ Բայց
աշխատասիրութիւնը՝ լուսաւոր և բարեկարգ տէրու-
թեան միջումն միայն ձեռք կտայ և ո՛չ բարբարոսաց
միջին ։ Եթէ մեր ազգը էս բնութիւնը չէր ունեցել,
քրիստոնեայ չէր էլել՝ էս օր էլ մեր թագաւորութիւնը
հաստատ կլինէր ։ Բայց Աստուած ողորմած է · այժմ
մենք Ռուսաց հզօր տէրութեան տակին ենք ։ Նրա շը-
նորհը և ողորմութիւնը մեզ վրայ առատ է ։ Այսուհետև
պէտք է ջանք անենք, որ աւելի ևս լուսաւորվինք, մեր
լեզուն, մեր հարենիքը պայծառացնենք ։



ՈՏԱՆԱՒՈՐՔ ԶՕՒԱՐՃԱԼԻՔ

## 57 ՄԱՏԱՂ ԳԱՌՆ

Մէկ պստիկ գառն ձիւնի նման մաքուր, սպիտակ՝
Գնաց մէկ օր՝ իր մօր հետ դաշտն՝ որ արածի·
Իր քէֆին սկսեց դէս դէն թռչիլ, խոտերի տակն.
Չէր ուզում՝ որ փոքր ժամանակ հանգիստ նստի։

Գարվէր, դարդուս չափ էր քցում անզգուշութեամբ.
Թէ քար, թէ փայտ, թէ խոտ, թէ ձոր բնաւ չէր նայում.
«Ո՛րդեակ՝ հանդարտ» ձայն էր տալի մայրն կասկածմամբ·
«Ո՛րդեակ գլխիդ փորձանք կգայ, որ չես լսում։»

Բայց գառնուկն հէնց ծուլ էր բլում, խայտում, խաղում.
Եւ լեառն ի վէր, և լեառն ի վայր միշտ վազվզում·
Վերջն մօր ասածն կատարվեցաւ, և անխելք գառն
Իր գժութեան պատիժն սարի գլխին առաւ։

Սարի գլխին մէկ շատ մեծ քար կար վէր ընկած.
կամեցաւ գառն՝ որ էս քարի վրովը թռչի·
Հէնց ծուլ էլաւ՝ թէ չէ, ոտքը տակին մնաց
Եւ ջարդվեցաւ։ Էլ ո՞վ կարէր նրա սիրտն առնի·

Դուք սիրելի երեխայք իմ, լաւ միտք արէք·
Եւ էս բանը ձեր սուրբ սրտումը տպաւորեցէք։
Ինչ քէֆ որ մարդ չափիցը դուրս կամի անել,
Յետոյ նրան ցաւ կգառնայ և չի պրծնիլ·

## 58 ԿԱԹՆԻ ԿՃՈՒՃՆ

Կաթնի կճուճն գլխին դրած,
Գոգնոցն խատակ դոշին կապած,
Մարթայ գնումէր բազարն շտապով,
Որ իր ապրանքը ծախի լաւ գնով·

Բայց չունքի որ առուտրումը
Ամէն մարդ իր խէրն է ուզում.
Էսպէս նա էլ՝ միտք էր անում,
Թէ որ ծախի, ի՞նչ կըլլի դատումն ։
«Վէց չահի հօ ամէն մարդ իմ կաթնին կը տայ.
Որովհետև քաղաքումը բոլոր թանկ ա ։
Ես էս փողն ընաւ չեմ խարջել, ու կբանացնեմ,
Ու ինձ համար, որքան կը տան, հէնց ձու կառնեմ ։
Երեք անգամ թուխս կդնեմ, ձագ կը հանեմ,
Ա՛խ՝ ի՞նչ կըլլի՝ որ թէ տեսնեմ՝ էն վախտն հալս.
Էնքան ձագեր իմ առաջին թրպըտալիս.
Թէ մարթ է աղուէսն, նրանց կգողանայ, կամ կը խեղդի ։
Երբ մեծանան, կտանեմ բազարն ։ Թէ լաւ սհաթի
Ռաստ բերի, թանգ կըծախեմ, մէկ խոզ կառնեմ,
Փառք Աստուծոյ․ տանը հօ թեփ ես շատ ունիմ ։
Կուտացնեմ, կչաղացնեմ, էլլի կծախեմ ։
Ու էս փողովն յետոյ մէկ լաւ կով կըդնեմ ։
Խոտը տանն է, դարմանն ունինք, ի՞նչն է պակաս.
Աստուծով էլ չուտով կը ծընի ․ Փորթ կը բերի ։
Հիմիկ հա կաց, ու քէֆ արա, տանը նստի ։
Կաթն ու մածուն, եղ ու կարագ, ինչ սիրտդ ուզի,
Կեր ու քնիր, էլ մի զարթիր, քէֆիդ նայի ։
Ա՛խ՝ ի՞նչ կըլլի էն վախտն հալըս՝ որ առաջիս ։
Մեր գիժ փորթը տրտինգ անի, դէս ու դէն վազի ։
Էս ասաց ու ինքն էլ սկսեց տրտինգ անիլ ։
Գլուխդ սաղ ի ։ Ջուն էլ, ձագն էլ, խոզն էլ, կովն էլ,
Փորթի հետ թըռան, ու կաթնի կճուճն հետները տարան ։

## 59․ ՇՈՒՇԱՋԻՆ (ԱՊԱԿԱԳՈՐԾ) ։

Մէկ շուշաչի դուքանը նստած՝ միտք էր անում.
Գլուխը քորելով՝ իր փէշակից խիստ տրտնջում ։

«Էսպէս շուշայ միշտ ծախելով՝ ինչ օգուտ ա.
Էնպէս բանի պէտք է կըպած՝ որ ինձ շահ տայ»
Շուշայ մուշէս կը ծախեմ, կերթամ ապրանք կառնեմ.
Կտանեմ Մոսկով, կամ այլ քաղաք խրիդ կանեմ.
Քու բախտն թէ որ կը յաջողի, ես լաւ գիտեմ.
Թէ որքան փող ու խազինայ յետ կը քցեմ.
Էլ ով ա գիժ որ դուքանում նստի, տանջվի.
Կերթամ մէկ լաւ տուն կը շինեմ, որ ով տեսնի,
Խելքը գընայ, ուշ ու միտքը վրէն դմայլի.
Տան առաջին մէկ մեծ այգի էլ կը քցեմ,
Ու միջումն մէկ լաւ չադրվան դուս կը բերեմ.
Նոքար, բէքար, ձի ու կառէթ ինձ համար կը սարքեմ.
Որ ամէնի աչքն էլ ինձ վրայ մնայ զարմացած.
Մէկ լաւ տեղից աղջիկ կուզեմ իմ հաւանած,
Եւ կընստիմ, քէֆս կնայիմ. կուտեմ կխմեմ.
Աստուած չանի՝ թէ մէկ մարդ իմ քէֆին դիպչի,
Ու քուչումն անց կենալիս գտակ չվեր առնի.
Էնպէս սիլայ կու խփեմ նրան, կամ քացի կտամ.
Որ սաղ ամիս՝ էլ բարձիցը գլուխ չվերցնի.
Քացին շուշի շկաֆին դիպաւ
Էլած չէլած ջախջախուրթ էլաւ.
Կոշկ ու սարայ, նոքար, բէքար, ձի ու կառէթ
Բոլոր փչացան մեր շուշաչու շկաֆի հետ.

ԱՌԱՍՊԵԼՔ

## 60. ՍԵԱՒ ԱԳՍԱՒՆ ԵՒ ՀԱՒՆ

Սեաւ ագռաւն՝ ագահ գող բնութիւն ունի,
Ինչ որ ձեռքն ընկնի, գողանայ, տանի.
Մէկ էսպէս ագռաւ տանէր ամէն օր, ուր ինքն քնէր,
Ոսկի թէ արծաթ, ալմաս, մարգարիտ, բնումը պահէր.
Հաւն տեսնելով, ա՛յ իմ բարեկամ, հարցրեց նրան,
Էսպէս. բաներից ինչ օգուտ ունիս՝ որ միշտ ժողվես.

Քեզ դրանք ոչ հաց, ջուր և ոչ կերակուր, ոչ ապրուստ կտան.»—
«Ա՜խ դու հէր օրհնած՝ պատասխան տվեց ագռաւն, ժպտելով.
Աչքածակ ագռաւն ինչ կհարցնի օգուտ կամ վնաս.
Միտն է գողանալ, խլել, յափշտակել և տանը պահել.
Թէ կուզ փթնի էլ՝ էս տեսակ բաներ մենք չենք հարցնել.»
Ագահ մարդն էլ միշտ էս ագռաւի պէս հաւաքել կամի.
Բայց ոչ մտած է թէ իրան կամ այլոց մէկ օգուտ բերի.

## 61. ԾՈՅԼ ԷՇՆ 'Ի ՎԵՐԱՅ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Էշն բէզարած իր ճանապարհիցն՝
Էկաւ գետի ափն, տեսաւ էս կողմիցն.
Որ լաւ խոտ կար ջրի էն միւս դրագումն
Եւ փորն էլ իրան շատ զոռ էր անում.
Սովի ձեռիցը գրեթէ մեռնում էր.
Անցնիլ էն կողմը ալարը գալիս էր.
Ի՞նչ եմ դարդ անում. էս տեղ կու պարկեմ,
Րիկուն առաւօտ նրան կու տեսնեմ.
Աչքս կըզմայլի, հոգիս կմխիթարվի,
Մինչև էս գետն էլ հօ կըցամաքի.
Քնեց, վերկացաւ, էլ կրկին քնեց.
Ու համտապլուխը էլ միտք չի արեց.
Թէ գետը չի պակսիլ, ինքը կըսատկի,
Եւ խոտն իրան ձեռն երբէք համնիլ չի.
Էսպէս թեքն ընկաւ, մինչև միւս օրը
Գետը չի պակսեց, բայց նրա գլուխն ու փորը
Ցեխին թելն ընկան. կուզէր՝ որ լող տար,
Բայց էլ ջանումըն զօրութիւն չկար.
Մեր կեանքն նման է էս ճանապարհին.
Գետն օրինակ է ժամանակին.
Չեռք մեզանից փառք և բախտ կենաց.
Պէտք է աշխատենք՝ որ համնենք նրանց.

Ով իր մանկութեան վախտը կկորցնի,
Ու կծուլանայ և ջանք չի անի.
Վերջը աղքատ կ'մնայ, ու փառքից զրկված.
Մեր հաստագլուխ իշի նման սոված.

## 62. ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՔ ԵՒ ԱՐՋՆ

Երկու բարեկամք գնացին մէջէն,
Որ իրանց համար ո[illegible] անեն անդէն.
Իսկոյն մէկ մեծ արջ մէջիցը դուրս թռաւ,
Եւ կատաղութեամբ նրանց վրայ պրծաւ.
Մէկըն չտապով մէկ ծառ վեր էլաւ.
Միւսն էլ չորակոտոր գետնի վրայ ընկաւ.
Շունչն իրան քաշեց, մնաց անշարժ ընկած.
Որ տեսնողն կկարծէր՝ թէ նա է մեռած.
Արջ պառն մօտացաւ նրան մրթմրթալով.
Ականջը դէմ արեց բերնին ուսուլով.
Գէս դէն հոտ քաշեց, էլ ականջ դրեց,
Բայց մեր խեղճ որսկանն էնպէս շունչն կտրեց,
Որ արջը նրան մեռած կարծելով.
Թողեց, հեռացաւ՝ բերանը լիզելով.
Խային բարեկամն ծառիցն վէր էկաւ,
Ընկերին հարցրեց՝ թէ արջն ինչ ասաւ.
«Արջն թանքան արեց՝ որ ես միս անգամ
Քեզպէս վատ մարդի հետ էլ դուս չ'գամ,
Որ էսպէս փորձանք էլ չբերես գլխիս,
Ինձ վտանգի մէջ թողես և փախչիս.—

## 63. ԵՐԵՔ ԽՈՒԼ ՄԻՄԵԱՆՑ ՀԵՏ ՀԱԿԱՃԱՌԻՆ

Մէկ խուլ մէկ օր իր ոչխարի սուրուն կորցրեց.
Գնաց՝ որ գտնի. ու հանդումն մէկ մարդ ճանկեց

Որ բանը ձորին արտը ջրումէր ։ Ու նրան հարցրեց ։
Էս տընաքանդն էլ խուլ ըլելով, էնպէս կարծեց.
Թէ ինչ տեղ է ջուրը հասել. ու նրան ցոյց տվեց ։
Խուլն իր միջումն հէնց իմացաւ՝ թէ էն կողմով
Ոչխարները գընացել են. ու գնաց չուտով ։
Սատանայական նա իր սուրուն թամամ գտաւ,
Ու մէկ կաղ գառն միւս խուլին փէշքաշ բերաւ ։
«Գլխիցս ուադ իլ. ես չեմ կարել դրա տալը.
Թէ չէ բաշով գլուխդ կջարդեմ. աներես դու »։
—Ի՞նչ հաստատղլուխ մարդ ես էլել տօ ; դու մնհամ.
«Սուրուն իմն է. որը սիրտս ուզի, քեզ էն կըտամ ։
Իմ քէֆը չես, որ քո սըրտի ուզածն անեմ.
Տէրը ես եմ. սաղը չեմ տալիս, կաղը քեզ բաշխեմ »։
Խօսքըները իրար հասաւ, տուր ու դըմբոց լաւ չաղացաւ ։
Մէկն իր բանը, միւսն ոչխարը ուսին դրած՝ գնացին գեղը ։
Որդեանց որտեղ՝ դեռ գեղը չի հասած,
Մէկ խուլ պառաւ ռաստ էկաւ նրանց,
Որ հարսներիցը խըռովել էր, էլ չէր ուզում,
Որ յետ դառնայ ։ Էնպէս կարծեց իրան միջումն,
Թէ նրանք խնդրումեն, որ բարըշի. ու անատամ
Բերանումն սկսեց դադ ու բէդադ անել, դոռալ ։
«Դժօխքը կ'իրթամ. նրանց սեւ երեսն ինձ մէջք ցոյց տալ» ։
Աշխարքումըս ամէն բանիլ էսպէս է ըլում.
Երբ խուլ մարդիկ մէկ մէկու չեն հասկանում ։—

## 64· ԱՌԻՒԾՆ· ԱՂՈՒԷՍՆ ԵՒ ԷՇՆ

Վէր կացէք, գնանք որս՝ էշ եղբայր. աղուէս.
Հրամայեց առիւծն թագաւորի պէս ։
Որսն արին չուտով, կաշին հանեցին
Ու քերթած միսը մէկ տեղ դարսեցին ։
Առիւծն մեր իշին տուաց բաժանել,
Եւ նա էլ արդար սկսաւ ճոխ անել ։

Ա՜յ երկարականջ դու, հաստագլուխ՝
Էգ ինչ ես անում։ Ասաց և նրա գլուխն
Բամբաչեց, ջարդեց, իշին սպանեց։
Այժմ դու բաժանիր. աղուէսին ասեց։
Երկուսս ենք մնացել, էլ դժուար չի ըլել.
Ու ինչպէս հարկն է, այժմ բաժին անել։
Էշն նահատակ էնտեղ էր ընկած.
Էլ կարէր աղուէսն բաժանել արդար,
Մեծ բաժինն տալով առիւծին՝ ասաց.
Ինձ չէ հարկաւոր, որքան կամիս, առ։
«Ա՜յ խորամանկ դու՝ քեզ ով սովորցրեց
«Էգ խելքն բանացնել. առիւծն հարցրեց։»
—«Միթէ վարժապետս էստեղ ընկած չի.
Որ ես անխոհեմ քեզ հետ չարժէի։»
Միթէ շատ մարդիկ, որք խղճմտանք չունին.
Աղքատ մարդի հետ ոչ էսպէս չարժին։

## 65· ՀԵՏԱՔՐՆՆԻՆ ԵՐԵԽԱՅՆ (որ կամի ամէն բան իմանալ:)

Մէկ փոքր աղջիկ՝ որ դեռ հինգ ամաց էր.
Մէկ մէր ունէր, որ ամէնէն սիրելի էր։
Գեղումն հանդարտ իրանց տանը կենում էին։
Մէկ առաւօտ մայրը կանուխ տանիցն էլաւ
Ու իր դստերն դուս գնալիս պատուէր տուաւ։
Սիրելի իմ, էս սնտղուկին դու ձեռք չի տաս.
Որ յետ դառնամ, քեզ կբաշխեմ. լաւ իմանաս.
Բանալիքը սատ կթողում, բայց չմոռանաս.
Ու սնտղուկը առանց ծծմորդ քեզ ու քեզ բանաս։
«Աչքիս վրայ, գլխիս վրայ, աղջիկն ասաց.
«Ես քո խօսքը երբ կըկոտրեմ. միամիտ կաց։»
Հէնց դուս գնաց մայրը, թէ չէ, դուռը փակեց

Կոմիտ աղջիկը և սընդուկը իսկոյն բացեց.
Էն սհաթին մէկ աղաւնի մէջիցն թռաւ.
Ու թևերը թափ թափ տալիս շուշին գնաց.
Ինչ կար չկար տոլի վըրայ գլխի վեր ածեց.
Աման, չաման իմ խասին ջարդեց, փշրեց:
Ինքն էլ իսկոյն տանիցը դուս թռաւ քէֆը քոքած.
Շատ էլ հարայ տվեց, գոռաց, գլուխը ծեծեց
Մեր անհնազանդն. բայց թառ ոչինչ չըբաշարեց.
Մայրն ուշացաւ. աղաւնին թռաւ, ինքն էլ տրված
Մինչ կրկիւնն՝ պատիժն առաւ՝ վէր ընկած մնաց: —

## 66. ԱՂՈՒԷՍՆ ԵՒ ԱԳՌԱՒՆ

Խորամանկ աղուէսն տված շրջելով
Տեսաւ մէկ ագռաւ ծառի վրայ նստած.
Մէկ կտոր պանիր կտցին ունելով.
Կամէր ճաշակել իշտահը քոքած:
Աղուէսի ունկըքն իսկոյն դող ընկաւ:
Ջոքով պահանջել, կամ խլել չէր հնար:
Տես, որ ճարւոք ջանայ անիրաւն
Որսալ կտորքէն իր յետին պաշար:
Քնձքնցալով, մնձմնձալով.
Գէս ու դէն ծուլ ըլելով.
Մէկ պոչն էր խաղացնում,
Մէկ գլուխն էր շարժում:
Մինչև խեղճ ագռաւն իր տեղն մնացած.
Յապուշ կտրեցաւ. մնաց զարմացած,
Թէ ինչ պէտք է ըլի էս նոր թամաշէն.
Որ իրան օրը երբէք չէր տեսած:
Էսպէս կեղծաւորն էկաւ ծառի տակն.
Չեմ կարող պատմել, թէ ինչքան գլուխ տվեց.
Ու գովել սկսաւ բիւր հազար տեսակ.
Մինչև նրա գլուխն լաւ բարաթ եղեց:

«Ես ի՛նչ եմ տեսնում. հաւատամ աչքիս.
Դրախտիցն ես եկել, թռչնա՛ն գեղեցիկ.
Աչքերըդ քցելիս, լոյս է վեր թափում.
Թեւերդ շարժելիս,՝ ոսկի է փայլում.
Ո՞վ կասի՝ թէ դու ղուշ ես.
Թէ ղուշ չես. դու լոյս ես։
Երբ որ քեզ տեսի, էլ փառքն աշխարհս
Աչքս չի գալիս. հաւատամ խօսքիս։
Ա՜խ թէ մէկ այսօր ես լսեմ ձայնդ էլ.
Դարդ չի՛ մնալ սրտումս, որ թէ մեռնիմ էլ։»
Հէնց յիմար ագռաւը լսեց էս բանը
Թէ չէ, թեւերը թափթափ տալով,
Վիզն երկարացրեց, որ տայ իր ձայնը։
Մէկ էլ էն տեսաւ, որ քաղցր ի՛սահով
Աղուէսն նրա պանիրը անդ կամաց կամաց
Մչրելով էլ չէր լսում նրա կռաւոցն.
Հէրի՛ք ղողղաս՝ խասար անասուն.
Գորտերն էլ լսելիս քո թշուառ ձայնը.
Ջահլաքուշ են ըլլում. ու ջուրը թափւում։
Ինչ ուզում էիր, ահա՛ ստացայ
Ու քո հօր խէրին անջախ կշտացայ։»
Էլ ի՛նչ կարող էր անբախտ ագռաւը
Աղուէսին անել՝ թէ կուզ որ տրաքէր։
Թէ մօտ էր եկել, չար անիրաւը
Իրան էլ սաղ սաղ կուտէր, կմարսէր։—
Էսպէս էլ և մենք միշտ պէտք է անենք,
Սուտ խօսքից չխաբւինք, մեր չափը ճանաչենք։—

## 67. ՋԱՐՄԱՆԱԼԻ ՄԱՐԴԻԿԸ

Շատ տեղ շրջելով, շատ երկիր տեսած.
Մէկ մարդ էլ կրկին իր աշխարհն եկաւ։

Ծանօթ, բարեկամ գլխին հաւաքած,
Ցանկային գիտել՝ թէ նա ինչ տեսաւ։
«Լեզուս չի բռնում, որ ձեզ յետ պատմեմ,
Ինչ որ լսել եմ, ու աչքով տեսել։
Թողէք բարեկամք փոքր շունչ առնեմ.
Ապա լսեցէք. ինչ կուզեմ ասել։
Վա՜յ էն մարդին, որ իր տանը միշտ մնայ.
Ու աշխարհիցս ոչինչ խաբար չիմանայ։
Դուք լաւ գիտէք՝ թէ որքան մեծ է երկիրն.
Ու որքան ծով, ազգ և քաղաք և բաներ
Կան ամէն տեղ հազար տեսակ զանազան։
Շատ տեղ կայ մարդիկ իրար միս ուտեն.
Շատ տեղ հացի փոխ խոտը ճաշակեն։
Էնպէս երկիր կայ, ուր ոսկի, արծաթ
Խոտի պէս դուս գայ, ջրի հետ գնայ։
Ու մարդիկ այնպէս յիմար են, հանդարտ,
Որ մէկ ծառի պտուղն ոսկուց լաւ աշեն։
Բայց էս ինձ էնքան չի զարմացրեց.
Ինչպէս մէկ երկրի մարդքերանց գործն,
Ցառաւօտէ մինչեւ մութն անխափան
Նստին նոքա ի միասին լուռ, անձայն։
Գիրթ ու պռունկն էնպէս ունքն հաւաքած,
Որ տեսնողին երեւում են քար դառած.
Ո՛չ դժոխքն են մտածում, ո՛չ արքայութիւնը.
Հաց ու կերակուր խպառ մոռացած,
Ու Աստուծոյ աչքիցն՝ հէնց բոնիր՝ ընկած.
Իրար երեսի նայել չեն ուզում.
Ամպն էլ որ գոռայ, կայծակն էլ թափի,
Թօփ ու թնդանօթ նրանց գլխովն անցնի.
Թէ կուզ սար երկինքն նրանց վրայ փուլ գայ,
Մէկն էլայ տեղիցն չի ուզի ժաժ գայ։
Թէ դժոխքն էլ գնացել՝ հաւատացէք ինձ.

էն զարհուրելի կերպարանքն ինձ
Չէին պատահել, որ քանի միտքս գայ,
—Հոգիս և մարմինս սարսի և դողայ»:
«Ախր ինչ է նրանց միտքն ու կամքը.
—Որ էսքան մտածեն», հարցրին բարեկամքը:
—«Կարելի է՞ թէ իրանց աշխարքի հոգսն են միշտ քաշում.»
«Ո՛չ բարեկամք. ո՛չ»—«Ուրեմն անգին քարն են նրանք պտրտում:»
«Ախ՛ ինչ էք ասում»—«Ուրեմն իրանց հին մեղքն են լաց ըլում:»
Չ՛է. չէ՛, ինչ ասեմ. «Ուրեմն խելացնոր են՝ որ չեն զգում,
Խօսում, կամ լսում, բաս ինչ են անում:»—
«Թուղթ—թուղթ են խաղում.»

## 68. ԾԵՐՈՒՆԻՆ ԵՒ ԱԳՌԱՒԻՆ

Ծերունի մի ալեզարդ, փառաւոր,
Երկարհանդերձ լայնաթև, ծոցաւոր,
Մէկ մեծ ակրողորմնայ, մէկ հաստ գաւազան
Իր ձեռքին բռնած. գնայր լուռ, անձայն:
Իր շատ ման գալուցը սալած, բեզարած,
Ագռաւն էլ մէկ քանի ցորեն էր գտել.
Հէնց էն էր ուզում, որ ժողովի նրանց
Ու տանի իրան ձագերը կերակրել:
Մէկ էլ էն տեսաւ, որ մեր ճամփորթը
Գայր տմբտմբալով, սուս և ծանրաքայլ:
Շորերն երկար, մօրուքն երկար.
Էլ ինչ պէտք է ագռաւն նրանից վախենար:
Էսպէս էր գնում մեր սուրբ ծերունին.
Որ խեղճ ագռաւն իր մտքումն ասաց.
Թէ էսպէս խաս Աստուծոյ ճամբին
Մարդի չի վնասել, տեղը մնաց նստած.
Բայց ողորմելու գլխին էն եկաւ,
Ինչ որ գալիս է միշտ էն մարդկերանց.

Որ չորսը խաբվէին, ու իրաւ, անիրաւ
Թոյլ տան միշտ գործել առանց խղճմտանաց.—
Հէնց մոռացաւ՝ թէ անգութ ծերուկին
Աչքը չի վերցրեց, որ անդ ի դաշտին
Խղճալի թռչունն անսաս իր համար
Կամէր ժողովել սակաւ ինչ պաշար.
Էլ ոչ միրքերն, ոչ իր բոյնն չի ամաչեցաւ.
Ու գնալով կամաց.
Ինչպէս սաստիկ խփեց պինդ գաւազանաւ,
Որ ագռաւի տան փշուր փշուր էլաւ.
Շատ էլ թրպրտար, ինչ կարէր անել.
Էլ սուգ ու շիւան չէր կարող օգնել.
Լաւն էր, որ չօմախն թիկն չի դիպաւ.
Ու մեր ծերունւոյն դատաստան տարաւ.
Բայց ով չի գիտի՝ թէ շատ ժամանակ
Մեր դատաւորաց խելքի բռնձակն
Մեր անբախտութիւններին դատարկ է ըլում.
Եւ թէ խեղճ մարդիկ ինչ ցաւ են քաշում.
Էսպէս մէկ քնձոտ բէկի դատաւորի
Պատահեցաւ մեր ագռաւն խղճալի.
Շատ էլ որ խելքն զոռ ածեց ու մտածեց,
Նրա մէկ տան էլ կտրել հրամայեց.—
Բայց մեր ագռաւի փոքրիկ գլխումը
Շատ խելք կար, քանց նրա անտաշ գզրումը.
Ինչ օգուտ դրանից ինձ և աշխարքի.
Թէ կուզ որ դրա մէկ ձեռն էլ կտրվի.
Էլի միամիտ ու անմեղ մարդիկ
Տեսնելով դրա չորերն, մորուքն ճէք.
Անպատճառ կխաբվէին, ու շատ կվնասվէին,
Եւ ինձպէս վտանգի միջում կհանդիպէին.
Հրամայէր, որ քեզ մկրատ մի բերեն.
Դրա երկար մորուքն խուզեն.

Ա՛ռ դրա գաւազանն, ու տէր ողերմնայն.
Որ ամէն տեսնողք սարսյն և դողան ։
Եւ էդ սեաւ երկար չորի փոխանակ
Թո՛ղ հաքնի թշուառդ ամէն ժամանակ
Կարճ հանդերձ, որ դրան ով ոք որ տեսնի,
Պահի իր գլուխը, բալի տակ չընկնի ։
Մեր պատուորի պատարկ վերնատանը
Փոքր տեղ արին մեր ազատի բանքը·
Խաչուր համար նա իսկոյն հրամայեց.
Մեր ալևորի պոչն ու գլուխն խուզեց,
Խայէս ինչպէս մէկ անպոչ կէչեղակ,
Կամ փետրած ագռաւ մեր լողլող մղղսին.
Ուր որ գնում էր, ճարդիկ թէ անբանք
Նրան տեսնելով՝ միշտ հեռանային ։
Վա՜յ նրան, որ չորին հաւատ կընծայի ·
Ու տաւջ մարդի սիրան խմանալ չի ։—

## 69· ԶՕՐՈՒԹԻՒՆ ԳԻՆԻՈՅ

Գինին՝ զօրդ է՝ բաղի մարդի վնաս է տալիս,
Ու չատի սիրան սուրբ ակճորի հոտն առնելիս,
Դող է ընկնում, ուչ ու միտքը, խելքը գնում.
Բայց մեղաւորն մարդն է, և ո՛չ սուրբ բաժակը·
Որ չափից դուրս գործ է ածում Աստուծոյ Նուէրք ։
Քանի՜ տխուր սիրտ, քանի՜ դարտոտ մարդ
Իրանց դառն օրերը միչտ մոռածելով
Հէնց պռունկնեն առնում էն քաղցր չարբաթը՝
Թէ չէ, ցաւ ու հոգս մոռանում չուտով ։
Բայց Մահմադն իրան ազգի ընութիւնը
Լաւ ճանաչելով, ու գինու զօրութիւնը·
Ղուռանի միջումը սաստիկ արգիլեց
Ու գինի խմողին թունդ պատիժ կարգեց ·

Մէկ խառն աւելի փնջին նայելով,
Ու զուռնի խօսքը սայրիչ չանելով,
Թագուն գինու հետ լաւ սէր էր քցել ։
Շատն ըսեց թէ չէ, հրամայեց կանչել ։
Խանն իրան գլուխը զարթելու խաթեր
Սկսաւ մէկ լաւ հընարք գործ ածել ։
Ընկաւ քաղաքը պուճախէ պուճախ,
Ման էկաւ, ճարեց մէկ քօռ ու մէկ կաղ
Ու էնպէս աղքատ, որ մէկ թել ձըլէն
Չադար կարկատան հետը գուս էին ջալխ ։
    Շահի մօտ էնպէս սուփրայ էր քցած,
    Որ տեսնողի աչքը մնում էր սառած,
    Ու բերնի ջուրը թափւում էր գնում ։
    Էլ մաջմալ կայլին քօռն, կաղն և աղքատն.
    Որ էսպէս սուփրայ իրանց օրումըն
    Երազումն էլ ընաւ գեռ չէին տեսել ։
    Իշտահն քաքած, սկսան քէֆ անել,
    Շատն էլ մոռացան. իրանց վիճակն էլ ։
Գինու հարբածութն սկսաւ ներգործել,
Ու նրանց կատակն էնպէս տաքացաւ,
Որ սև ու սպիտակ էլ չէին ջոկել ։
Էս մէջոցումը մեր քօռ ղօնաղը
Թասը վեր առաւ. ալից գինու ուէրը.
Լցնում էր. վէր ածում, էլ կրկին լցնում,
Մինչեւ ձայն էր տալիս, ու գովասանում ։
«Փա՛հ, փա՛հ, փա՛հ էս ինչ անման գոյն ա,
Է լազար է տօ, ճշմարիտ. լալազար ։»
    Կաղի հէրսն ու ջիգրն էնպէս շարժեցաւ.
    Որ փիչ մնաց քօռի գլուխն ուղեցանէր ։
«Խռռում ես, խռռ. թէ չէ վեր կկենամ,
Ու գլխիդ էնպէս մէկ քացի կտամ,
Որ ջուղդ ու ըռէնդ քթովդ դուս կգայ ։»

«Ցո՛ւր, հողին հանի՛, թո՛ղ դա սատկի.
Ով որ քեզանից ջատամայ կուզի.
Իմ ջանն ըլի սաղ, ես կը վճարեմ,
Ասաց աղքատը, գլխիկ կանգնած եմ:
«Քո մեծութիւնը» խանը սրդ արեց,
Գինու զօրութիւնը այժմ դու լաւ տեսար,
Թէ ինչպէս կաղին նա ոտքը բաշխեց,
Ու քու մարդին ոչ. ք. ապրանքն դրամ:
Էլ մի՛ գնամիչ անիր ծառայից,
Որ չի հընազանդ կենում հրամանից:»

## 70. ՀԵՏԵՒԱՆՔ ԿՈՅՐ ՇԱՀԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Մոլլայ Մասրուդինն իր հարեւանից
Մէկ օր մէկ պղինձ սիրա փոխ առել.
Իր կարիքն հոգաց, յետ բերեց պղինձն,
Բայց հետն էլ մէկ փոքր թասայ էր դրել:
Խեղճ հարեւանը մնաց զարմացած,
Խորամանկ Մոլլի միտքը չիմացած.
«Պատուելի, ասաց, էս ինչ ընկեր է,
Որ պղնձիս հետ իմ տունս եկել է.
Ես քեզ անցեալ օրը մինը փոխ տուի,
Այժմ ճխատուելէն, էս ինչ պէտք է լլի:»
Մոլլէն նրան իսկոյն փառաւոր դիմով
Խնամ, Հուռէնի, Ղուրանի անունով
Գլխումը նստեցրեց, թէ նրա պղինձն
Ծնաւ իր տանը: Թէ չէ իրանից
Գիժ չէր, որ իր տան հաջաթը վերցնէր,
Ու ընդ վայր ուրը օտարին բաշխէր.
Հարեւանն թէ և չատ էլ միտք արեց,
Ուտրը քաշեց, ղէ խը չարժեց,
Բայց ախլի չանն փորը չի ծակէլ:

Վա՜յ էն մարդին, որ անխելք ագահ է ։
Հարևանն սկսաւ շնորհակալ լինիլ,
Ու ուրախութեամբ թաւէն տուն տանիլ։
Մէկ քանի օրից յետոյ միասանգամ
Մօլլէն էլ էկաւ առ իւր բարեկամն.
Դեռ չէր բերանը բաց արել, խեղճն
Դրացին խնդութեամբ շուտով վազեց տուն,
Պղինձը դուրս բերեց, մեր Մօլլին տուեց.
Էլի կծնանի, իր մտքումը կարծեց ։
Բայց Մօլլի հէսաբն դեռ չէր իմացել ։
Օրը շաբաթ դարձաւ, շաբաթը ամիս,
Ջարէն կտրեցաւ, պղինձը պահանջել
Սկսաւ դրացին. բայց դու ոչ մեռնիս ։
Մօլլէն էլ ոչ սուրբ, ոչ խամ թողեց,
Քեաբ ու Ղուրանով չարաչար երդուեց,
Թէ նրա խեղճ պղինձը մէկ ամսից առաջ
Վա՜յ տէր կանչելով, մեղայ գոչելով,
Հոգին աւանդեց, երկինքը գնաց։
Դրացին մնաց քար կտրած սառած ։
Հէնց բռնես մէկ ձի գլխին քացի տուեց.
Մօլլի ոտ ու գլուխը չափելով ասաց ։
«Հանաքն ուրիշ վախտ արա դու ինձ հետ
Էդպէս մասալէքն պառաւքը կասեն,
Կամ պղինձս տուր, կամ նրա ջառըմէն ։
Թէ չէ ո՞վ է լսել՝ թէ պղինձը կմեռնի ։ »
—«Էդպէս հաստատըլուխ մարդ էլ կլինի՞.
Ծնանողը մէկ օր պէտք է մեռանի ։
Ով որ ծնելուն հաւատ կընծայի,
Ու ծնած որդին իր տունը կըտանի,
Բա՛ս մահուան սուգը չի՞ պէտք է կատարի ։ »
Դիւանն էլ Մօլլին իրաւունք տվեց ։
Դրացին թէև գլուխը քարէքար տվեց ։

Ձեռը ո՛չինչ չընկաւ, ումէլ հարցրեց,
Հէնց էն չանհվեցաւ, որ վրէն ծիծաղեց։
Խորամանկ մարդկցը Աստուած ազատի։
Խելացին Նրա ո՛չ խէր ո՛չ շառը
Երբէք իր օչումն չպէտք է ուզի։—

## 70. ՚Ի ՎԵՐԱՅ ՆՈՐ ՏԱՐԻՈՅ

Գնաց հին տարին միշտ անդառնալի,
Մտաւ Նա ի ծով խոր ժամանակի։
Ինչ որ մենք տեսանք՝ թէ չար, թէ բարի,
Էլ յետ չէն դառնալ յայսմ աշխարհի։
Շատ մարդիկ հէրու մեծ յոյս ունէին,
Թէ չէ էս տարի, այլ շատ ժամանակ
Կեանք վայելէին, լաւ օր քաշէին.
Այլ կիսատ մնաց Նոցա իղձ, փափագ։
Քանի բարեկամք, ծնողք, սիրելիք
Դեռ լան և սգան իւրեանց սիրելիս՝
Մեռեալքն մեռան, այլ քաղցր յիշատակ
Նոցա միայն մնայ անմոռաց աստիս։
Շատի աչքերից և շատի սրտից
Դեռ չէն պակասել արտասուք, կսկիծ։
Աշխարհ ամենայն ուրախ է այսօր,
Բայց Նոցա հոգիք տխուր, սգաւոր։
Ա՛խ ո՞վ է տեսնում, թէ նո՛ր է տարին։
Էլ նոյն արեգակն, նոյն օրն ա ծագել։
Մենք ենք մեծանում, մեր կեանք պակասին,
Բայց ինքն ժամանակն երբէք չի փոխվիլ։
Երազի նման մեր կեանք անցանին,
Թէ վաղն ի՞նչ կը գայ ո՛չ գիտեմք այսօր։
Այլ Նա միայն մնայ անմահ յաշխարհիս,
Որ էս կեանքումը մէկ լաւ բան գործեց։

Հայրն երկնաւոր ողորմելով մեզ՝
Պահեսցէ զանգին կեանս ձեր ծնողք սիրելիք։
Որքան խնդութիւն և մխիթարութիւն մեզ.
Որ ձեր հետ սկսանիմք այժմ նոր տարի։
Անգին ծնողք մեր, այս նոր տարի ՚ւ օր
Բարի, շնորհաւոր լիցի ձեզ այսօր։
Շատ տարի այսպէս առողջ և անփորձ
Տացէ վայելել ձեզ Հայրն երկնաւոր։
Ներեցէք՝ թէ մեր գործք երեխական
Ցաւ ինչ հասուցին ձեզ բազում անգամ.
    Այլ մենք խոստանանք նոր տարւոյս սկզբան
    Հնազանդ կալ ձեզ միշտ, կատարել զձեր կամս։
    Աչք ձեր խնամառատ երկար ժամանակ
    Քաղցր լիցի մեզ վրայ, ուրախ և պաշտպան.
    Թէ գործով ոչ տանք ձեզ ինչ փոխանակ.
    Գոհ սրտիւ լինինք ձեզ միշտ օրհնաբան։

## 71. ԾՆՈՂԱՍԷՐ ԱՂՋԻԿՆ ԵՒ ՄԵԾԱՀՈԳԻ ՄԵԾԱՏՈՒՆՆ

Օրն մթնել էր, սկսաւ յանկարծ,
Երկինքը սեւնալ և փայլատակել.
Մարդիկ, թէ թռչունք թմրած, սասանած
Փախչէին իտուն, կամէին թագչել.
    Ամպն գոռայր, մռնչէր
    Կայծակն փայլէր, թօթափէր,
Եւ բոլոր երկինքն կամէր կործանել։
Կատաղի քամին մտեալ ձորամէջն,
Կամէր խորտակել լեառն և անտառ.
Սարսափ, արհաւիր տիրէր ամէն տեղ,
Երևէր՝ թէ սուզ էր պատել աշխարհ։

Ծառք սօսանին, ճռընչան.
Վէմք հեծեծեն, դղրդան.
Եւ բոլոր բնութիւնն սպառնայ չարաչար։
Ձիաւոր մի անդէն, ճամփէն մոլորած,
Մտանէ ի ձորն, որ անձն պահպանի։
Հազիւ նա կարաց մէկ քարափի ցած
Թաղչիլ, որ իր գլուխն փորձանքից պահի։
Ցանկարծ լսէ ձայն լալոյ
Աղէտալի ի ձորոյ.
Եւ սիրտ օտարին կսկծայ մորմոքի։
«Ա՛ռ, տա՛ր ինձ քեզ հետ՝ գնա դու կատաղի.
Ա՛ռ, ինձ կորցրու. տա՛ր ինձ հետ ալիացդ։
Դու խլեցիր բոլոր իմ փառքն յաշխարհի,
Դու ինձ զրկեցիր յամենայն բարեաց։
Աշխարքն ինձ համար սուգ է և խաւար։
Իմ կեանքն ինձ համար դառն, անտանելի։
Թո՛ղ մահն ինձ տանի, ես մէկ օր առաջ
Որ թէ մեռանիմ, սիրտ իմ դադարի։
Անկուշտ, անիրաւ, արեան ծարաւի.
Անմեղ ծնողք իմ զի՞նչ արարին քեզ։
Հովացի՛ր արդեօք՝ գետ դու ամեհի.
Մի՞թէ նրանց արիւնն կշտացրուց քեզ։
Բայց ի՞նչ եմ ասում։ Սիրտըս հովանա՛յ.
Լսե՞ք դուք արդեօք ձայն հառաչանացս,
Ծնողք սիրելիք՝ որք ինձ անխնայ
Զոհ տուիք ցաւոց, գնացիք դուք անդարձ։
Ա՛խ՝ ձեր սիրտ բարի, ձեր գութ ծնողական
Ո՛չ չարժի, որ ես աստ այսքան տանջիմ։
Ընդէ՞ր ոչ կամիք և ինձ անպաշտպանս
Տանիլ առ ձեզ անդ, ուր եմն կարօտիմ։
Երկինքն եմ նայում, դուք ո՛չ երեիք,
Երկրից ինձ համար վաղուց հեռացաք։

Թէ գետն էլ ընկնեմ, կարեմ ձեզ հասնիլ.
Որ ձեզ հետ լինիմ, ինձ չի մոռանայք։
Դու զգաս իմ ցաւս՝ երկինք գթառատ,
Դու ինձ հետ ցաւիս՝ որպէս տեսանեմ։
Այլ ընդէր ոչ գայ կայծականց մի շանթ
Խորովել զիմ սիրտ, որ ես գամ առ ձեզ։
    Դու գնաս հանդարտ և ոչ պակասիս,
    Եւ իմ արտասուք թափին, անսպառ.
    Բայց մխ, քո հեղեղք ի ծովն դադարին,
    Այլ իմ լաց և սուգ ինձ մաշէն իսպառ։ »
    Այսպէս հեծեծէր աղջիկն սգաւոր,
    Եւ քամին առեալ ձայն լալոյ նորա,
    Տանէր ի քարափն, ուր էր ձիաւորն,
    Քաղէր և մաշէր սիրտ, հոգի նորա։
Օրն սկսաւ պարզիլ, լուսանալ,
Ամպք դադարեցան սակաւ առ սակաւ.
Եւ երեկոյեան շողն լուսածաւալ
Ի ձորն և ի դաշտս կրկին փայլեցաւ.
Իսկոյն ձիաւորն վշտահար սրտով
Գնայ ի գետափն, ուր գայր ձայն լալոյն.
Այլ ինչ նա տեսաւ կարէ պատմել ով.
Ո՞ւմ լեզու կարէ նրա տեսածն ասել.
    Աղջիկ մի անմեղ հրեշտակատեսիլ
    Ծնկան վերայ ընկած և բաղկատարած,
    Գեղեցիկ աչքերն երկինքըն կթած,
    Այնպէս կայր ուղղեալ անխօս և անշունչ.
    Իր շատ լալուցն ձայն նորա հատեալ,
    Աչքերն խորշոմեալ ի դառն արտասուաց,
    Հրեշտակի նման անդ լուսափայլեալ՝
    Երեւէր նըմա հոգին աւանդած.
    Քարացաւ օտարն, մերձենալ կամէր,
    Այլ ոտք իւր չզօրէր՝ որ նրան մօտենայ.

Ի հեռուստ կանգնեալ՝ մինչ հոգւոց հանէր,
Յանկարծ ինչպէս քնից աղջիկն զգաստանայ․
«Ձայն քո կսկծալի սիրտ իմ տոչորէ.
Քաղցր իմ օրիորդ՝ ընդէր այդքան լաս․
Թէ քեզ աշխարհքումն օգնել ինչ կարէ,
Ասա․ ես իմ կեանքն պատրաստ եմ զոհ տալ․»

«Աշխարհքի բարիք մեռեալ են վասն իմ,
Իմ բարիք և կեանք անձ աստ թաղին․
Թէ կայ ինձ այլ ճար, ես չուտով կամիմ,
Որ և իմ ոսկերքս աստ դադարին․
Տեսանես այս գետ փրփրուն, ամեհի,
Այս դաժան հեղեղ փակեաց իմ ողջ լոյս․
Փոքր ժամանակում աստ մայր և որդի
Ջնջեցին իւրեանց կենաց ազնիւ լոյս.
Դառնադէտ կսկիծ մահուան մօր իմոյ
Արար խղճալի հայր իմ յուսահատ.
Շուտով միանալ ընդ ամուսնոյն իւրոյ
Նա մեզ որբ թողու և սուզանի աստ ,
Որդին հարազատ ցաւս այս տեսեալ՝
Եւ ինքն անկանի ազատել իւր հայր․
Այլ երկոքին ևս դի անշնչացեալ՝
Հանեալ անձ կան յայժմ ծորալայր․»

Ասաց և անշունչ անկեալ ի վերայ
Աքալից տապանին՝ կայր անշնչացեալ.
Եւ լուսափայլուն անմեղ դէմք նորա
Թուէր զջերմ հոգին երկնից նուէր տալ․
Խղճահար օտարն կծկեալ ի վերայ
Անբաղդ ցաւալւոյն աղէխարշ սրտիւ
Գրկէ և տանի ի տուն իւր զնա
Մինչև ժամանակն փարատեալ զցաւն․
Մինչև վիրաւոր սիրտն սակաւ սակաւ

Բուժեալ ի մշտայն՝ օրիորդն նմա,
Լինի որդեգիր քաղցր և սիրելի.

---

Խաղաղութիւն մանկանց. ուր նկարագրի բնութիւն սրամիտ աղայի ուրումն՝ ձևացելոյ իբրև տկարամիտ ոք և գիժ ի ժամ հարցափորձի:

## 72. ԳԻԺՆ:

Ո՞ւր դուք, գեղեցիկ մանկութեան օրեր՝
Ո՞ւր հեռացաք դուք մեզանից շուտով.
Էլ ո՛չ սար, ո՛չ ձոր, ո՛չ ջուր. ո՛չ դաշտեր
Մեզ չեն մխիթարում իրանց ծաղկներով.
Աչքս բաց արի ինչպէս երազում
Ամէն բան ինձի քաղցր էր երևում.
Բայց ինչքան մեր չափը հասնում ենք, առնում,
Էնքան օրէցօր տխրում ենք, տրտում.
Ո՞ւր մեր էն սրտի ուրախութիւնքը.
Գնացին, հեռացան էս աշխարքումը.
Էլ ո՞վ մեզ կտայ էն՝ ազատութիւնը՝
Ամէն բան անել՝ ինչ կայ մեր սրտումը.

Թէ երբ ինձ ճանաչեցի, թէ երբ սկսայ խօսել, ինձ չի յայտնի: Երբ խելքս գլուխս եկաւ, աչքս բաց արի, ինչ որ տեսայ, հենց գիտում էի թէ Աստուած ինձ համար ա ստեղծել: Մէկ կողմն իմ օրօրոցն էր, մէկ կողմն իմ խաղալու բաները. աչքս նրանց առնելիս՝ էնպէս էի իմանում՝ թէ քանց ինձ էլ աշխարքումը բախտաւոր՝ մէկն էլայ չկայ: Էնպէս էի իմանում՝ թէ աշխարքի թագաւորը հենց ես եմ: Ո՛վ ասես՝ ինձ էր սիրում, գրկում և ձեռն առնում: Իմ մէկ դարտակ խօսքն էլ՝ ամենին դիր էր գալիս: Իմ մէկ յիմար ծիծաղն էլ՝ ա-

մէնի սիրտը շահում և մխիթարում էր ։ Իմն էր՝ իմ ծնողաց գիրկը ։ Հէրս էր նեղանում , մօրս էր տալիս, մէրս էր նեղանում, հօրս էր տալիս ։ Վարդի պէս հոտ էին առնում , խնձորի պէս խաղացնում ։ Մէկ տեղս ցաւելիս՝ հազար անգամ խատում և համբուրում էին ինձ՝ որ սիրտս առնեն ։ Մեր տան իշխանը ես էի ։ Ասածս ասած էր, ուզածս՝ ուզած, արածս՝ արած ։ Առաւօտը լուսանում էր՝ թէ իրիկունը մթնում , իմն էր խաղալը, կռուելը, դէս ու դէն վազելը, շորերս պատռելը ։ Փէտէ ձիս՝ իմ հոգին էր ։ Սող օրը նրա վրայ քուչէքը չափում էի, ու՝ էլ ո՛չ հաց, էլ ո՛չ ջուր բնաւ միտքս չէին գալիս ։

Ինչպէս իմանում էի՝ թէ էն երկնքի գեղեցիկ աստղերը էն արեգակը և լուսինը, էն դաշտերի՛, ալվան ալվան ծաղկըները՝ հէնց ինձ վրայ են ինչպէս խնդում և ծիծաղում ։ Հէնց ինձանով են՝ ինչպէս մխիթարում ։ Ինչպէս էի կարծում՝ թէ հէնց էս քէփին կմնամ , էս սիրտը կունենամ, էս օրերը կքաշեմ ։

Բայց ա՛խ՝ անիրաւ աշխարք՝ որ ինձ էսպէս խաբեց ։ Հէնց փոքր մեծացայ թէ չէ՝ ամէնն էլ իրանց ուժը ինձ վրայ են փորձում ։ Ամէնն էլ իրանց կուժն ու կուլէն՝ հէնց ինձ վրայ են կոտրում ։ Մէկ բան անելիս՝ իսկոյն որը գլխիս ա խփում, որը քամակիս ։ Կատուն տեղիցը շարժում ա , ես եմ մեղաւոր ։ Ով մէկ բան ա անում, ինձ են մեղ դնում ։ Պառաւած ձիուն՝ ախր էլ ո՞վ դարի կտայ ։ Իս չիմիկ իմ բանն ա դառել ։ Հին ապրանքը գին չի ունենալ ։ Ես հիմիկ հին ապրանք եմ դառել ։ Վա՜յ․․․

վա՜յ․ ափսոս իմ օրերին ։ Ափսոս իմ անց կացրած ժամանակին ։ Ինչի՞ էդպէս շուտով գնացիք․ ընչի՞ էդպէս թէզ՝ ինձ ձեր տեսութիւնից զրկեցիք ։ Ա՜խ իմ անմեղ մանկութեան, քո համը, քո քաղցրութիւնը էլ յաւիտեան չեմ առնիլ ։

Հիմիկ էլ զոռ են անում՝ թէ պիտի կարթաս ։ Հարամ ըլի էն հացն էլ, էն ալրուստն էլ․ որ ինձ տալիս են ։ Էլ ո՛չ աչքս ա քուն գալիս , ո՛չ սիրտս ա հանգըստանում ։ Գիրքս տեսնելիս՝ հէնց իմանումեմ՝ իմ հոգխառս ա ։ Վարժատան անունը լսելիս՝ միսս ջանումս հալչում ա ։ Երանի՝ տասն օր նախիրը ղըկեն, քանց կէս սհաթ վարժատունը ։ Ի՞նչ անեմ՝ մէկ հիւանդութիւն էլայ չի պատահում՝ սատանի աչքը քոռանայ՝ որ մէկ քանի օր պառկիմ, ու իմ գրքի երեսը չտեսնեմ ։ Թէ ասումեմ, առաւօտը տանիցը դուս գամ, գնամ մէկ պատի տակի կուչ գամ, ու իրիկունը տուն գամ, փորս ա դադրեգատ անում ։ Զէ՞ ասենք թէ ջէբս էլ հացով լցնումեմ՝ որ փորիս ջուղաբը տամ, իմ անաստուած վարժապետն ա ետեւիցս մարդ ղըկում, էն ժամանակը վա՜յ իմ օրին, վա՜յ իմ արեւին ։ Մէկ միան ծակն էլ որ հազար թումանով ուզենամ առնիմ, չկայ ։ Դորդ ա՝ բազի անգամ ասումեմ՝ թէ գլուխս ցաւումէր, ես մաշիք չունէի, ու էսով գլուխս պրծացնումեմ, ամա էս էլ չի օգտում ։ Ամէն օր գլուխ չի ցաւիլ. ես էլ լաւ գիտեմ, ո՞ւր մնայ վարժապետս՝ որ հազար ինձ նման սատանի ատամին ա խփել, ու ճամբու դրել ։ ‚-Այբ, Բեն, գլխիդ դմբեմ, Գիմ, Դա, ջոխին հազիր ա ։ Եչ, Զա, հա

կայ. ու հաղա՛ : Է, Ըթ. խաղս մնացեր : Թո, Ժէ մէկ բանի չաժէ : Ինի, Լիւն. Իծանս էկան տուն : Խէ. Ծա. կարթացօղն էծ ա : Կեն, Հո. եսիր չեմ հօ՞: Ձա, Ղատ. մնացել եմ սախտ : Ճէ, Մեն. ամէն, քուանայ, ո՞վ ձեռ.ք չի վերցնել մեզմէն : Յի, Նու, Շա, Ո, Չա, Պէ, Ջէ, Ռա. սոված մեռայ : Սէ, Վեւ, Տիւն, Րէ, ծանր է : Ցո, Ւիւն, Փիւր, Քէ. Իշի քուրք է. Օ, Ֆէ, ո՞վկէհ, գլուխս տրաքեցաւ : Մի քիչ տեղ արա՛, որ սիրտս հովանայ : Էնքան ասել եմ Էս..Էս...Էս կորած մոլորած անուները՝ որ տառմերս թուլացել են, գլուխս էլ ղուղ չի մնացել:

Էս պրծար, հիմիկ ասումեն՝ այ տղայ ասա՛ Այբ. Բէ, Ծէ, Ռա. ախպէր, զօռա. մեռայ : Չեր գլխովը դիպչի ձեր այբբենն էլ, ձեր այբ բէ ծէ ռան էլ, մեր հոգին հօ չէք հանիլ : Ի՞նչ էք ուզել՝ որ մեզանից էլ յետ չէք կարում ուզել : Չեմ կարթում, չեմ կարթում. հօ զոռի բան չի :—Կարթա՛, կարթա՛, ի՞նչ ա : Տօ՞, ձեր անունը չքանդվի, ախր էս յիմար կարդալումը ի՞նչ կայ, որ էսպէս մեր ջանը հանումեն : Շատ մարդ՝ որ մէկ այբի կտոր էլայ փորումը չունի, ա՛խ՝ չէ, չէ գլխումը կուպէի ասել շշկլեցայ, չունքի էս ղահրաման կարթալը փորի խարջ բան չի.ներեցէք ինձ՝ էս էլ կարթալու հաբարաթն ա, որ էսպէս լեզուս շաղվեցաւ՝ օ՛հ. օ՛հ.. բերանս ցաւում ա, թթու ա, կծու ա, աչքիս լիսը թըռաւ, այբն էլ ջհանդամը գնա՛, Փ՛ն էլ, էս սհաթս մէկ աման մածուն ըլէր, լաւ կխփշտէի, ու մէկ քոնձոտ այբի անունը տալիս, լեզուս կապվում ա : Էն էի ասում, շատ մարդ՝ որ այբի հաւն էլայ չի՛ տաել (էլ ի՞նչ բերնիցս թռաւ՝ տօ՛, այբն, ու հօ՞տ..կատուն հօտ ունի,

պէրը չունի, Աստուած մի՛ արասցէ՝ թէ հօտ էլ ունե-
նար, մարդի քեալլէն կտանէր, բէխը կցրուէր: Ի՞նչ
էի ասում, էլի խօսքիս տուտը կորցրի... Համբերի,
համբերի՛ իշի նոխտէն ձեռս ընկաւ, Սատանի անկաջը
խուլ, քիչ էր մնացել՝ որ էլած չէլած խելքս էլ այրի
հետ կուլտայի: Ուզում էի ասեմ՝ թէ ով որ կարթալ
չի՛ գիտի (երանի՛ էնպէս մարդին, մահի ձեռիցն էլ որ
ազատվէր, էնքան բաղդաւոր չէր ըլիլ, որքան կարթա-
լու ձեռիցն) պակա՞ս պատիւ ունի, պակաս փառքի տէր ա:

Ո՛չ աչքդ մի բան ա տեսնում, ո՛չ բերանդ համ ա
առնում: Շոր չի, որ մէկ օր կարես, տուն չի՝ որ շուտով
շինես, հաց չի՝ որ իսկոյն կուլ տաս, դեղ չի՝ որ աչքդ
խփես՝ ու դիվէր քցես, ինչ կըլի, ըլի, փորը սաղ ըլի:
Չի՛ էլ կարելի՝ որ ինչքան դրեր կան մէկ անգամ կամ
ծամես, կուլ տաս, կամ ջուր անես, խմես, կամ թէ չէ՝
քերես, ջնջես՝ որ քոււանան և աչքիդ չի երևին: Հա՛
կա՛ց, ու ոտիդ, գլխիդ արա՛, որ դժոխքի պուճախն էլ
գնաս, էլի քեզ հանումեն ու միտդ բերանդ տալլ՝ ա-
սումեն՝ պխտի կարթա՛ս: Ի՞նչ կուզես անիլ, աշխարքս
բոլոր թարսվել ա: Երկինքն էլ թուչես, էլի քեզ վէր են
բերում, գիրքդ կռնատակդ տալիս ու ճամբու քցում,
՞ըր, Աստուած իրանց գլուխը ո՛չ գիտէ:

Մէկ գիրքս կորցնումեմ, միւսն են ձեռս տալիս: Մէկ
գալամս կորցնումեմ, ծեծում, թակում, ասպնումեն՝
թէ գնա՛, միւսը բե՛ր: փոքր յեղի եմ գալիս, վա՜յ իմ օ-
րին: Դասս չգիտեմ, լինէյկէն հազիր ա: Ձեռս չեմ
դէմ անում, քամակիս են խփում, քամակս եմ քաշում,

ոտիս է դիպչում ։ Ի՞նչ անեմ, ո՞ր ջուրը ընկնիմ, ո՞ւրկորչիմ, որ էս դժոխքիցը ազատվիմ ։ Սատանի փայ ըլի աչքը դուս գայ, . . . . . . ըլի՛ ով որ էս կարդալը սահմանել ա ։ Ասումեն՝ կարթալով մեծ մարդ կդառնաս, հաց կճարես. տօ անա՛քանդներ՝ էս օր էլ՝ քանի որ մեծանումեմ, էնքան աչքից ընկնումեմ. Մէկ կտոր հաց են տալիս քթիցս են հանում ։ Էլ ի՞նչ կանեմ ձեր հացն ու մեծութիւնը, երբ օրս ու ումբրս կխաւարի ։ Երանի՛ ղշերին՝ որ էսպէս ցաւ չունին, ու իրանց քէֆին թռչում. ման են գալիս ։ Բօյս էլայ շուտով երկարանում չի՛, որ բալքի թէ ամաչեն, ու էլ վարժատունը չուղարկեն ։ Բիկուն եմ գիրքս ձեռս առնում, քունս ա տանում. առաւօտն ուզում եմ դասս սերտեմ. էլ ժամանակ չկայ ։ Աչքս որ բաց եմ անում, հէնց գիտեմ՝ իմ հօգեառ հրեշտակը բարձիս վերևը կանգնած, ուզում ա հոգիս առնի։ Ի՞նչ կլէր, որ ամէն օր կիրակի էր էլել որ հէնց մեր քէֆին ման գայինք ։

Հիմիկ էլ էկել էք՝ սի՛րելի ծնողք՝ որ տեսնիք՝ թէ ի՞նչ ենք սովորել ։ Շատ բարի՝ տեսէք, և իմացէք բայց Աստծու խաթեր դուք էլայ մեզ խեղճ էկէք և մեր չար ուստի պէս չի ջիրվիք, չի՛ բարկանաք՝ թէ ո՛չինչ չենք սովորել, ինչ Աստուած ավել ա նրանով ռազի կացէք։ Ռասցի՛ որ կարթալը կանֆէթ չի՛, որ բիրաղի բերանդ քցես և փորդ քաղցրացնես ։ Վ[illegible] նրան՝ ով որ նրա համը կառնի, կարելի է մինչև մահը էլ չի՛ մոռանայ ։

## 73․ ԽԵԼՕՔ ԵՐԵԽԱՅՆ։

Ի՞նչ․ ի՞նչ։ Գժվե՞լ ես տօ, թէ գլխիդ ձի աքացի տվել։ Ի՞նչ ես գլխիցդ դարտակ դարտակ դուս տալիս։ Էլի-ծանդ գլու՞խդ են հաւաքվել։ Ուզում ես՝ որ հէնց քուչէքումը ման գաս, նհախ տեղը քո հօր հացն ուտես․ ու մէկ բան էլայ չի՛ սովորի՞ս։ Տեսնում չե՞ս՝ որ ով որ կարթացել ա, մէկ բան գիտէ, նրան են միշտ պատիւ․ չին, նշան տալի՞ս Շատ բարի՝ չես ուզում կարթալ՝ մեր բաղումը խիար, կանաչի շատ ունինք ցանած, թէ կուզես՝ մէկ էշ առ, մէկ կէտե (զազանակ) ձեռ իդ բանիր, ու ամէն առաւօտ բեր, փողոցումը ծախիր։ Կամ թէ չէ մէկ կճուճ առ, ու կաթը ծախիր։ Ինչ կուզէ ըլի, պարապ ման գալուցը էլի լաւ ա։ Մարդ քանի մեծանայ, մէկ բանի պէտք է պէտքը գայ։ Պարապ հաց ուտելը փոր կծակի ու մեր հօր քիսին վնաս ա։

## 74․ ԳԻԺՆ։

Ա՛․․․հա՛․․․Աչքներս լո՛յս։ Աշխարքումն էլ ո՞վ դարդ կանի։ Դու էիր մնացել, որ իշի պոչը դպես։—Գլխիցդ ռա՛դ իլ․ էս ո՞վ է։ Խրատ ունիս, տա՛ր, ծախիր, մածնի տուր, ու գլխիդ քսիր։ Հլայ սրան մտիկ արէք։ Երեկ մէկ, էսօր երկու՝ ցխումը թաւալ էր տալիս, խելք չէր էլ իմանում, թէ հաց ուտելիս, ձեռը բերանը պիտի տանէր՝ թէ ականջը, հիմիկ ուզում ա, ինձ խրատ տայ։ Կորիր գլխիցս՝ թէ չէ էնպէս կխփեմ՝ որ երեք օր հաց ու ջուրը մտքիցդ կընկնի, ու չես իմա…՝ թէ չօլի ճամ-

բէն ծո՞րն ա ։ Խրատ ունիս, քեզ համար պահիր, թթու դի՛ր, պաս օրը շատ պէտք կգայ ։

ԽԵԼՕՔ ԵՐԵԽԱՅՆ ·

Ի՞նչ ասեմ ։ Քո հէրն ու մէրը ինչի՞ պէտք է քեզ հաց տան, ընչի՞ պէտք է քեզ տուն թողան, որ դու էդպէս կատաղես ։ Մէկ քանի օր պէտք է բօբիկ դռնէ դուռը ման գաս, մի քիչ քամի կուլ տաս՝ որ իմանաս՝ թէ սովը ի՞նչ ա, ծարաւն ի՞նչ ։ Տաք տեղ մեծացել ես, հէնց գիտում ես՝ թէ ամէն օր էսպէս կըլի ։ Բա՛ս քեզ պէս յիմար երեխին ի՞նչ ասեմ ։ Լաւ ա ։ Ես տեսնում եմ՝ որ թէկուզ քեզ ասած, թէկուզ պատին, բոլորը մին ա ։ Թամբալութիւնը մէկ անգամ վըէդ ես առել, էլ քո գըլխումը ի՞նչ բան տեղ կանի ։ Գիլի գլխին աւետարան կարթա՛, ասա ի՞նչ կհասկանայ ։ Էս հիմիկ քո բանն ա ։

ԳԻԺՆ ։

Ի՞նչ, ի՞նչ ։ Էլի բերանդ քե՞զ չես անում ։ Էլ ուզում ես՝ որ էդ ծուռ գլուխդ դզե՞մ ։ Շատ բարի ։ Հօ՞ միշտ էստեղ չենք մնալ՝ թէ քուչէն դուս կգաս··· ես գիտեմ՝ թէ գիլի աւետարանն ինչպէս կկարթան ։ Գլխիդ էն բանը բերեմ՝ որ ճամբէն էլ չճանաչես ։

## 75· ԱՅԼ ՄԵԾԱՀԱՍԱԿ ԵՐԵԽԱՅ։

Հա՛, հա՛ խէր ըլի, էս ի՞նչ խաբար ա ։ Ի՞նչ էք իրար միս ուտում ։ Թէ կռիւ էք ուզում, կէտին (փայտը) հազիր ա ։ Նա ձեզ կը բարիշացնի ։ Ի՞նչի համար էք կռիւ անում ։ Ո՞վ ա ձեր հացը՝ ձեր ձեռիցը խլել ։ (Հայելով 'ի գիժն) Էլ սատանէքդ մօ՞տ են եկել ։ Օ՛···ո՛վ քեզ չի՛

ճանաչիլ. վա՜յ նրան՝ դու սատանի եղի տուն ես: Ասացէ՛ք ինձ՝ ի՞նչ էք ուզում իրարից:

ԽԵԼՕՔ ԵՐԵԽԱՅՆ:

Աստուածդ նվիրեա՝ մէկ համբերի և ինձ անկաջ արա: Սրան տեսնո՞ւմ ես, էս կապովի գժին: Հէնց է՛ն ա ուզում, որ միշտ խաղայ, դարտակ ման գայ և բնաւ չի՛ կարթայ: Ի՞նչ կասես:

ԳԻԺՆ:

Նա՛լաթ չար սատանին՝ էլի դիւանը գլուխս էկան: Տօ՛ քեզ ի՞նչ, ա՛խմախ՝: Գո՞ւ ես իմ տէրը, կամ իմ հաց տվողը: Ինչ սիրտս ուզում ա, էն կանեմ, հօ՛ ձեր հացը չեմ ուտում:

ՄԵԾԱՀԱՍԱԿՆ:

Աչքի լո՛յս՝ լաւ ես ասում, ամա մէկ միտք արա, թէ բաշիբօզ ման գալով ձեռդ ի՞նչ կընկնի: Խաղալը լաւ է, ո՞վ չի սիրիլ. ես էլ որ խաղի անունը լսում եմ, հէնց իմանում եմ՝ թէ նոր կեանք եմ ստանում: Ամա որ մեծանանք՝ նա մեզ հաց, ու ջուր չի՛ տալ: Լաւն է՞ն չի, որ համ խաղանք, համ սովորինք:

ԳԻԺՆ:

Է՞հ՝ սատանի աչքն էլ քոռանայ, մէկիցը չեմ պրծել, միւսն ա գլուխս տանում: Ամէնն էլ էսօր փիլիսոփայ են դառել: Հէնց ինձ են գիժ համարում: Չունքի որ ասում են՝ ես էլ անկաջս կախ կանեմ, իմ դըրի հետ կընկնիմ, ի՞նչ ըլում ա, ըլի: Կիրակի օրը՝ փա՛ռք Աստուծոյ՝ հօ դաս չունիմ: Ի՞նչ եմ դարդ անում:

МЕԾԱՀԱՍԱԿՆ :

Հիմիկ խելօք ես խօսում՝ բարաքեալլահ, շատ ապրիս :

ԽԵԼՕՔ ԵՐԵԽԱՅՆ :

Ես էլ՝ հէնց է՛դ էի ասում, գլուխ չէի պատում.

ՄԵԾԱՀԱՍԱԿՆ :

Հիմիկ իմանումեմ՝ որ իծանդ փախել են: Աստուած տայ յետ չգան :

ԽԵԼՕՔ ԵՐԵԽԱՅՆ :

Սրան լաւ սհաթի պէտք է ուսատ բերած՝ որ գլխումը բան նստացնես, թէ չէ՝ էնպէս ա կարծում՝ թէ մենք իր վատն ենք ուզում:

ՄԵԾԱՀԱՍԱԿՆ :

Շատ քնելուցը, շատ խաղալուցը ո՛չինչ օգուտ չենք տանալ:

ԽԵԼՕՔ ԵՐԵԽԱՅՆ :

Ի՞նչ օգուտ. շորերս ա պատռվում, մաշկներս ա մաշվում, ու տեսնողն էլ՝ վրէներս ծիծաղում ա :

ՄԵԾԱՀԱՍԱԿՆ :

Սովորինք՝ որ լաւ մարդ դառնանք, ու ամէնն էլ մեզ սիրեն :

ԽԵԼՕՔ ԵՐԵԽԱՅՆ :

Էն ժամանակը ում մօտ էլ՝ որ գնանք, մեզ պատիւ կտան: Աշխարքը մեր ձեռին կըլի :

ՄԵԾԱՀԱՍԱԿՆ :

Գլուխ տուր ամէնին ու էդպէս այլնոյլին մտած մունք էլ չանես :

ԽԵԼՕՔ ԵՐԵԽԱՅՆ։

Գլուխ տուր, բէհէսար բանիցը որքան հեռու կե-նանք, մեր խէրն ա։

## 76. ԳԻԺՆ։

Գլուխ տալը կասեմ, էդ ի՞նչ մեծ բան ա, ձեր խօս-քին էլ անկաջ կանեմ, ես էլ եմ լաւ իմանում՝ թէ էշը դվո՛րը պէտք է տուն տարած՝ էդքան խելք էս պատիկ գըլ-խումս էլ կայ։ Աստծուն փառք, ամա... հիմիկ որ էդպէս ամէնդ էլ խելօքացել էք, ու ուզում էք ձեր գլուխը նը-րանց տաք, վախում եմ՝ թէ էքուց էդ գլուխը ուրիշ տեղ պահ տաք, բարձի հետ սէր քցէք, դասընէրդ չգի-տէնաք, կլասը եդի գաք ու լինէ չէն ձեր գլխին դիպչի։ Բանը ասիլը չի, բանը անիլն ա։ Ուրիշէն խրատ տալը շատ հեշտ ա. մըդսիքն էլ՝ էդ հունարն ունին, ամա՝ որ բանը տեղն ա գալիս՝ որ պէտք է անենք, էն ժամանակը սատանէն էլ մէջ ա ընկնում, ու մարդ չի իմանում՝ թէ ջրի ճամփէն ի՞նչ տեղ ա, կամ էշը ո՞ր տեղ ա արածում։ Եդոյ մալում կանի՝ թէ գիժն ո՞վ ա, խելօքն ո՞վ. Էսօր թաւը չի՛։

Սի՛րելի ծնողք՝ դուք էլ վկայ կացէք. սրանից էս խօս-քերը կէս փողով չեմ առնիլ։ Լեզուն ինչպէս որ կա-մենաս, էնպէս կարող ես շուռ տալ։ Թո՛ղ հիմիկ հարցը-նեն մեզ, տեսնինք, թէ ո՞վ շատ գլուխը կքորի, քուցին քուցին կանի, կուչ ու ձիգ կանի, քիթ ու պռունկը կը-հաւաքի, բերնի տեղ աչքը բաց կանի, լեզուով ջուղաբ տալու փոխ՝ կամ ոտին, կամ գլխին կանի, ո՞ւմ երեսը կը

կարմրի, ո՞ւմ աչքը կուլ կերթայ, ո՞ւմ սիրտը կդողայ : Սրանց շատի սիրտը հիմիկ էնպէս ա թրպրտում, ինչպէս մեր իծի պոչը : Բայց դուք էլ մի քիչ պէտք է խաթր անէք և մեր մանկութեանը խնայէք՝ թէ չէ՝ որ մէկ թթու աչք ցոյց տաք՝ էն էնա՝ հա՛ շատի սիրտը փորումը կհալչի :

## 77. ԱՄԵՆՆԵՔԵԱՆ ՄԻԱՁԱՅՆ :

Ո՞վ կասի կարթալն անպէտք ա մարդուս.
Կարթալով պէտք է մեր աչքը բացվի,
Որ լաւ իմանանք ի՞նչ կայ աշխարքումս,
Եւ ուրիշն երբէք մեզ ծաղր չանի :
Լաւ իմացէ՛ք դուք՝ ծնո՛ղք սիրելի՝
Որ ձեր աւանդը մեր մտքումն ունինք :
Աշխարքն աշխարքով դիպչի, անցն
Մենք ձեր բարի խրատն մ վկատարենք :
Թո՛ղ Աստուած մի ազ բախտաւոր պահի :
Ձեր շվաքն ր գլխիցն անպակաս լինի :
Ինչ որ ձեր սիրտն ա, մենք միշտ էն կանենք,
Որ բարեկամաց սիրտն ուրախացնենք :

**Վ Ե Ր Ջ :**